Коллектив считает, что только справедливое решение вопроса НКАО (о выходе из состава Аз. ССР) может реально нормализовать обстановку в республике и по всей стране, способствовать дальнейшему действительному укреплению дружбы между народами нашей страны. Необходимыми условиями выполнения вышесказанного являются:

1. Прекращение одностороннего освещения истинных событий в НКАО и вокруг него средствами массовой информации.

2. Признание Комитета Арцахского движения Армении органом волеизъявления всего армянского народа и прекращение всяческих репрессий против его членов.

3. Вывод так называемых войск по поддержанию общественного порядка, блокирующих столицу Армении от остальных регионов республики.

Председатель собрания **Егикян В.Г.**
Секретарь собрания **Гюрджинян А.О.**

21.07.1988 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 14, л. 69.

№ 79
РЕЗОЛЮЦИЯ
КОЛЛЕКТИВА ИЗДАТЕЛЬСТВА “ЛУЙС”

В ПРЕЗИДИУМ ВЕРХОВНОГО СОВЕТА СССР
ПРЕЗИДИУМ ВЕРХОВНОГО СОВЕТА АРМ. ССР

Коллектив издательства “Луйс” считает, что обсуждение на заседании Президиума Верховного Совета СССР справедливого требования армянского народа само по себе уже имеет большое значение. Коллектив выражает полное одобрение деятельности делегации Армянской ССР в ходе данного обсуждения. Результатом проявления единства армянского народа и правительства республики можно считать некоторые положительные сдвиги в решении этого вопроса, которые отмечены в постановлении Президиума Верховного Совета. Однако коллектив находит, что это постановление не решает окончательно проблему Нагорного Карабаха и, естественно, не может удовлетворить требование армянского населения НКАО, как и всего армянского народа. Коренным решением этой проблемы может быть только воссоединение Нагорно-Карабахской автономной области с Советской Арменией, которое вытекает из принципов ленинской национальной политики и явится одним из проявлений истинной социалистической демократии.

Тем самым будет исправлена одна из грубейших ошибок, допущенных в сталинский период, которая 67 лет являлась очагом национальных конфликтов. Таким образом, будет устранена создающая национальные конфликты проблема и положена основа для действительного укрепления дружбы между армянским и азербайджанским народами.

Коллектив издательства “Луйс” (всего 65 подписей).

21.07.1988 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 14, л. 82.

№ 80
РЕЗОЛЮЦИЯ
ОБЩЕГО СОБРАНИЯ КОЛЛЕКТИВА ИНСТИТУТА
ЭКОНОМИКИ АН АРМЯНСКОЙ ССР

Общее собрание коллектив Института экономики АН Армянской ССР, рассмотрев Постановление Президиума Верховного Совета СССР от 18 июля 1988 г. “О решениях Верховных Советов Армянской ССР и Азербайджанской ССР по вопросу о Нагорном Карабахе” считает:

1. В принятом Президиумом Верховного Совета СССР Постановлении не нашел отражения ленинский принцип самоопределения наций по статье 70 Конституции СССР, а также не полностью учтено положение статьи 2 Конституции СССР и по этой причине оно не может быть окончательным решением поднятого вопроса.

2. Предложенные на заседании Президиума депутатами Верховного Совета СССР от Армянской ССР компромиссные решения, связанные с временным выводом НКАО из состава Азербайджанской ССР до окончательного и справедливого решения возникшей проблемы, являются приемлемыми в сложившейся напряженной обстановке.

3. Коллектив Института считает, что “карабахское движение” является общенациональным и, следовательно, его нельзя представить как националистическое движение, организованное отдельными лицами.

4. Собрание коллектива Института обращается в Верховный Совет Армянской ССР с просьбой поднять вопрос по Нагорному Карабаху в Верховном Совете СССР для повторного рассмотрения.

Председатель **Селвиназян Б.С.**
Секретарь **Петросян А.В.**

22.07.1988 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 16, л. 98.

№ 81
ОБРАЩЕНИЕ
КОЛЛЕКТИВА АРМЯНСКОГО
ЭЛЕКТРОМАШИНОСТРОИТЕЛЬНОГО
ПРОИЗВОДСТВЕННОГО ОБЪЕДИНЕНИЯ
“АРМЭЛЕКТРОМАШ”

ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА
АРМЯНСКОЙ ССР ВОСКАНЯНУ
МОСКВА, ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА
ВЕРХОВНОГО СОВЕТА СССР ГРОМЫКО

Двенадцатитысячный коллектив Армянского электромашиностроительного производственного объединения “Армэлектромаш”, ознакомившись с постановлением Президиума Верховного Совета СССР о решениях Верховного Совета Армянской ССР и Азербайджанской ССР по вопросу о Нагорном Карабахе, выражает удовлетворение по вопросу социально-экономического развития армянского населения НКАО, одновременно выражает свое несогласие с принятым постановлением. Армянские электромашиностроители считают, что данный вопрос решался без учета интересов обоих армянского и азербайджанского народов, без учета чаяний и надежд армянского народа с игнорированием волеизлияния самого Карабахского народа, что противоречит духу и букве Конституции СССР, ее 70 статьи, которая гарантирует право каждой нации на самоопределение. Рабочие, служащие, инженерно-технические работники ПО “Армэлектромаш” просят при изучении вопроса НКАО со стороны утвержденной комиссии рассмотреть вопрос вновь и решить его справедливо в рамках ленинской национальной политики права наций на самоопределение.

Коллектив ПО “Армэлектромаш”.

22.07.1988 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 14, л. 67.

**ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ
ԿՈԼԵԿՏԻՎԻ 1988 Թ. ՀՈՒԼԻՍԻ 22-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎԻ ԲԱՆԱԶԵՎԸ**

**ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԶԱՐՏՈՒՂԱՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ
ՀԽՍՀ ՊԵՏ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՅՈՒՋԲԱՇՅԱՆԻՆ**

Ս.թ. հուլիսի 22-ին Մաշտոցի անվան Մատենադարանի կոլեկտիվի ընդհանուր ժողովը՝ քննարկելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. հուլիսի 18-ի որոշումը «Լեռնային Ղարաբաղի հարցի առթիվ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին» և «Իզվեստիա» լրագրի ս.թ. հուլիսի 22-ի ՏԱՍՍ գործակալության անունով ստորագրված «Նրանք չպետք է ժողովրդին տանեն իրենց հետևից» հոդվածը, ընդունեց հետևյալ բանաձևը.

1. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հիշյալ որոշումը հակասում է լեռնիյան ազգային քաղաքականության անկյունաքարային սկզբունքներին, դեմոկրատիայի տարրական նորմերին, ԽՍՀՄ Սահմանադրությանը: Այն անարդարացի է և անընդունելի:

2. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում բոլոր ելույթները, բացի հայ պատվիրակների խոսքերից, կառուցված էին նախապես հայտնի միակողմանի և կողմնակալ որոշման նախագծի հիման վրա, դրա ճնշման և թելադրանքի պայմաններում: Այս ամենն ըստ էության դեմոկրատիայի և հրապարակայնության ոտնահարում է նշանակում:

3. Մատենադարանի կոլեկտիվը խստորեն դատապարտում է կենտրոնական հեռուստատեսության և մամուլի միտումնավոր և աչառու դիրքորոշումը Ղարաբաղի հարցի նկատմամբ, դատապարտում է նրանց հակահայկական մեթոդիկ, ստահող գնահատականներն ու պրովոկացիոն հաղորդագրությունները: Ի դեմս «Իզվեստիայի» հուլիսի 22-ի վերոհիշյալ հոդվածի՝ դրանք ձեռք են բերել ծայրահեղ անբարոյական բնույթ: Պահանջում ենք պաշտոնական բողոք ուղարկել ԽՍՀԿ ԿԿ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ՝ նմանօրինակ ցինիկ ոգով գրված հոդվածների տպագրությունն արգելելու համար:

4. Վերակառուցումից բխած և վերակառուցում ազդարարող, մինչև այսօր էլ սահմանադրական ճանապարհով ընթացող համագ-
գային և համաժողովրդական դարաբաղյան շարժումը ՀԽՍՀ-ում,
բնականաբար, պաշտպանություն չգտնելով լճացման տարիներից
եկած կուսակցական և խորհրդային ղեկավարության կողմից, ինչ-
պես ամեն մի նման շարժում, անհրաժեշտաբար ծնեց իր ղեկավար-
ներինը: «Կռունկ» և «Ղարաբաղ» կոմիտեները ԼՂԻՄ-ում և ՀԽՍՀ-
ում դառնալով ժողովրդի ազնիվ հույզերի իսկական արտահայտիչն
ու կազմակերպիչը՝ հինգ ամիս շարունակ հավասարակշռված ու
շրջահայաց ղեկավարում են համաժողովրդական շարժումը՝ թույլ
չտալով սահմանադրական որևէ դրույթի և որևէ օրենքի խախտում:
Գերմարդկային ջանքերով նրանց հաջողվեց թույլ չտալ պատաս-
խան Մուսկալիթ ո՛չ Հայաստանում, ո՛չ Ղարաբաղում, ո՛չ որևէ այլ
տեղ: Այս ամենի համար նրանք համաժողովրդական գովեստի և
շնորհակալության են արժանի միայն: «Իզվեստիայի» «Նրանք ժո-
ղովրդին չպետք է տանեն իրենց ետևից» ստալինյան ժամանակնե-
րի ոգով գրված հոդվածում նրանց տրված պիտակները, հերյու-
րանքներն ու լուտանքները բացարձակ անհիմն են, ժամանակավո-
րապես ուշացած շուրջ 50 տարի:

5. Համաժողովրդական շարժման ղեկավարների և ակտի-
վիստների նկատմամբ որևէ ճնշում և հալածանք կիրառելը կարող է
աննախադեպ հուզումներ առաջացնել ժողովրդի մեջ, և երկիրը
կանգնեցնել անելանելի ու անկառավարելի վիճակի առաջ, ուստի,
պահանջում ենք արգելել նրանց նկատմամբ նմանօրինակ որևէ
սանկցիայի կիրառումը:

Մենք խստագույնս դատապարտում ենք Երևանի և Աբովյանի
քաղկոմների որոշումը Ա. Մանուչարյանին և Վ. Ենգիբարյանին
ԽՍԿԿ շարքերից հեռացնելու անօրինական որոշումները և պա-
հանջում վերականգնել նրանց ԽՍԿԿ շարքերում:

Ժողովի նախագահ՝ **Քաղդասարյան Է.**
Քարտուղար՝ **Մարգարյան Ա.**

ՀԱՍ, ֆ. 207, ց. 44, գ. 16, ք. 35-36:

**«ՀԱՅԿԱԶՄԳԱԶԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

Վարչության կոլեկտիվը գտնում է, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ին կայացած նիստի որոշման 1-ին կետը, որով մերժվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու որոշումը, չի համապատասխանում ազգային քաղաքականության լենինյան սկզբունքին և ԽՍՀՄ-ի կազմավորման կարևորագույն հիմնադրույթին, այսինքն՝ ազգերի ինքնատրոշման իրավունքի հիման վրա ֆեդերալ պետության ստեղծման լենինյան գաղափարին:

Ժողովը դատապարտում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստի ընթացքում որոշ պատգամավորների կողմից ամբողջ նախագահության և մասնավորապես՝ հայկական պատվիրակության ներկայացուցիչների վրա որոշակի ճնշում գործադրելը և էլույթների անհարկի ու անթույլատրելի ընդհատումները:

Կոլեկտիվը պահանջում է զորքերը անհապաղ դուրս բերել Երևան քաղաքից՝ համարելով, որ քաղաքի բնակչությունը թույլ չի տալիս իրավակարգի այնպիսի խախտումներ, որ անհրաժեշտություն գգացվի զորքերի միջամտության, որ զորքերի ներկայությունը ոչ թե նվազեցնում, այլ սրում է լարվածությունը և՛ քաղաքում, և՛ ամբողջ հանրապետությունում՝ սպառնալով առիթ դառնալ խոշորամասշտաբ ընդհարումների:

Ժողովը դատապարտում է կազմակերպված պիկետը «Զվարթնոց» օդանավակայանում և՛ զորքերի կողմից իրականացված բարբարոսական միջադեպերը և՛ օդանավակայանում, և՛ Երևան-Էջմիածին խճուղու օդանավակայանին հատող հատվածում, և՛ օդանավակայանի ամբողջ շրջակայքում: Կոլեկտիվը գտնում է, որ «Զվարթնոց» օդանավակայանում կատարվածը մեծ վնաս հասցրեց ԽՍՀՄ բազմազգ ժողովուրդների և հայ ժողովրդի ինտերնացիոնալ բարեկամությանը:

Վարչության կոլեկտիվը պաշտպանում է ժողովրդի կազմից ընտրված «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունը՝ ընդգծելով, որ կոմիտեն ժողովրդի կամքի ու ցանկությունների արտահայտողն է ու կատարողը:

Կոլեկտիվը պահանջում է Սուճալիթում հայ ժողովրդի նկատմամբ կատարած եղեռնագործության հանցագործների դատավարության ընթացքի լայն հրապարակայնություն:

Կոլեկտիվը գտնում է, որ նշված պահանջների իրականացումը խթան կհանդիսանա պլանային առաջադրանքների գերազանց կատարմանը:

Նախագահ՝ **Հարությունյան Մ.**
Քարտուղար՝ **Գրիգորյան Շ.**

25.07.1988 թ.

ՀՄՄ, ֆ. 207, ց. 44, գ. 18, ք. 49.

№ 84
РЕЗОЛЮЦИЯ
СОБРАНИЯ АКТИВА ИНСТИТУТА
“АРМГИПРОТРАНС”

ПЕРВОМУ СЕКРЕТАРЮ ЦК КП АРМЕНИИ АРУТЮНЯНУ С.Г.
ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА
АРМЯНСКОЙ ССР ВОСКАНЯНУ Г.М.
ПРЕДСЕДАТЕЛЮ СОВЕТА МИНИСТРОВ
АРМЯНСКОЙ ССР САРКИСЯНУ Ф.Т.

Коллектив института “Армгипротранс” целиком и полностью поддерживает принципиальную позицию делегации Армении на заседании Президиума Верховного Совета СССР от 18 июля 1988 г., основанную на необходимости справедливого решения вопроса о Нагорном Карабахе.

Мы поддерживаем усилия, направляемые армянским народом на удовлетворение справедливых требований населения Нагорного Карабаха, усилия, способствующие устранению ненормальных взаимоотношений между армянским и азербайджанским народами, возникших из-за упорного нежелания части интеллигенции, советских и партийных руководящих работников Азербайджана с реалистических позиций подойти к решению вопроса о Нагорном Карабахе.

Считая одной из важнейших задач улучшение территориальных связей Нагорного Карабаха с Арменией и идя навстречу поже-

ланиям его населения, коллектив института “Армгипротранс” принял решение разработать на общественных началах, безвозмездно, работая во внеурочное время, проект автомобильной дороги, кратчайшим путем соединяющей Горисский район Армении с Нагорно-Карабахской областью.

Мы уверены, что наш скромный вклад будет содействовать исполнению искренних желаний населения Нагорного Карабаха.

В целях практического решения этой задачи просим возбудить ходатайство с разрешением выполнить на месте изыскательские работы.

Принято собранием актива единогласно.

Директор института **Дандуров В.К.**
Секретарь партбюро **Аругюнян В.А.**
Председатель профкома **Мхитарян Л.А.**
Секретарь комитета ЛКСМ **Карапетян А.Т.**

25.07.1988 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 16, л. 38.

№ 85
РЕЗОЛЮЦИЯ
ОБЩЕГО СОБРАНИЯ КОЛЛЕКТИВА
“АРМГИДРОПРОЕКТА”

В ПРЕЗИДИУМ ВЕРХОВНОГО СОВЕТА АРМЯНСКОЙ ССР
ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР
А. ГРОМЫКО

Общее собрание коллектива Армгидропроекта выражает возмущение и протест против метода и атмосферы рассмотрения Карабахского вопроса на заседании Президиума Верховного Совета СССР. Заседание занималось побочными фактами и обстоятельствами, сопутствовавшими Карабахскому вопросу, как следствие ошибок руководящих органов и дезинформации, основное существо вопроса практически не затронуто. Коллектив не согласен с приня-

тыми решениями и требует рассмотрения существа Карабахского вопроса в историко–политическом аспекте и с позиций статьи 70 Конституции СССР, утверждающей ленинский принцип самоопределения народов. Нельзя преднамеренно вводить это положение в искусственное противоречие со статьей 78, не имеющей отношения к случаю волеизъявления самого населения НКАО, имеющего как и все народы право на самоопределение. Коллектив не считает вопрос закрытым и уверен, что при объективном рассмотрении по существу и с действительно интернационалистических и конституционных позиций он будет наконец решен справедливо.

Коллектив “Армгидропроекта”.

25.07.1988 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 14, л. 78.

№ 86

ՀԽՍՀ ԳԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՐ ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ 1988 Թ. ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԶԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ
ՀԽՍՀ ՊԵՏ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
Մ. ՅՈՒՁԲԱՇՅԱՆԻՆ**

ՀԽՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցներս (կոլեկտիվի մեկ երրորդից ավելին, մյուսները արձակուրդի մեջ են և բացակայում են քաղաքից) ս.թ. հուլիսի 26-ին կազմեցինք մեր վերաբերմունքն արտահայտող հետևյալ փաստաթուղթը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. հուլիսի 18-ի որոշման «Լեռնային Դարաբաղի հարցի առթիվ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին» և ս.թ. հուլիսի 22-ին «Իզվեստիա» լրագրում, ապա հուլիսի 23-ին «Կոմունիստ» թերթում տպագրված Տասսի հատուկ թղթակիցներ Գ. Թալալևի և Ա. Տրաֆիմովի ստորագրությամբ «Ուր էին տանում նրանք ժողովրդին» հոդվածի, ինչպես նաև ս.թ. հուլիսի 23-ին «Սովետա-

կան Հայաստան» օրաթերթի «Նայենք ճշմարտության աչքերին» առաջնորդողի վերաբերյալ:

1. Լեռնային Ղարաբաղի հարցի առթիվ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988թ. հուլիսի 18-ի որոշման առաջին կետն անարդարացիորեն միակողմանի է և անընդունելի. այն հակասում է լեռնային ազգային քաղաքականության և դեմոկրատիայի հիմնական սկզբունքներին, ԽՍՀՄ Սահմանադրությանը:

2. Ղարաբաղյան համազգային-համաժողովրդական շարժման «Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեները ՀԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում ծնվել են հայ ժողովրդի կամքով և դարձել նրա արդարացի պահանջի ձայնափողը: Դրանք հայրենասիրական (սակայն բնավ ոչ նացիոնալիստական) կազմակերպություններ են, վայելում են ժողովրդական զանգվածների անսահման վստահությունն ու հարգանքը, որի վկայությունն են Ստեփանակերտում, Երևանում և հանրապետության այլ վայրերում տեղի ունեցած կեսմիլիոնանոց միտինգները: Անցած 5-6 ամիսների Ղարաբաղյան շարժման նշված կոմիտեների գործունեությունը ընթացել է զուտ սահմանադրական, դեմոկրատական ուղիով, երբեք չի հանդիսացել հակաիրավական, առավել ևս՝ հակախորհրդային:

3. Մենք խստորեն դատապարտում ենք «Ղարաբաղ» կոմիտեի անդամների և գործունեության նկատմամբ կենտրոնական ու հանրապետական մամուլի միտումնավոր, անբարո ղիրքորոշումը և պահանջում դադարեցնել նրանց վրա բարդված բացարձակապես անհիմն մեղադրանքների և ամոթալի պիտակների հոսքը՝ ոճով հար և նման 37 թվականին և այն տարբերությամբ, որ «ժողովրդի թշնամի» պիտակին այժմ փոխարինել է «վերակառուցման հակառակորդ»-ը: Ի դեպ, կոմիտեի անդամների բանավոր ելույթներից կցկտուր քաղվածքներ կատարելը ապացուցման բարոյական միջոց չէ:

4. Մենք պահանջում ենք դադարեցնել կոմիտեի անդամների և Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակիցների նկատմամբ գործադրվող հանիրավի ճնշումներն ու հալածանքները: Այս առումով դատապարտելով Ա. Մանուչարյանին և Վ. Ենգիբարյանին ԽՍՀՄ շարքերից հեռացնելու Երևանի և Աբովյանի քաղկոմների ոչ օրինական որոշումը՝ պահանջ ենք ներկայացնում վերականգնելու նրանց ԽՍՀՄ շարքերում:

5. Վերակառուցման փուլում հանդես են եկել բազմաթիվ հասարակական կազմակերպություններ՝ տարբեր ծրագրերով (պատմական հուշարձանների պահպանություն, գոյապահություն և այլն): Դրանց գործունեությունը խրախուսվում է, հատկացվում են մի-

տինգների անցկացման և մամուլում արտահայտվելու հնարավորություններ:

Բարձր գնահատելով «Ղարաբաղ» կոմիտեի գործունեությունն անցած 6 ամիսների ընթացքում՝ մենք կոչ ենք անում օրինականացնել նրա կարգավիճակը (ստատուսը): Հանձին կոմիտեի, մեր ժողովրդի կյանքում աճել ու հասունացել է հասարակական աննախադեպ մի կազմակերպություն, որն անձնվիրաբար և անշահախնդրորեն կատարում է և անշուշտ կշարունակի կատարել իր դժվարին, բայց ազնիվ ու վեհ առաքելությունը՝ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման և ազգային-մշակութային զարգացման խնդիրների լուծման ճանապարհին:

[Փաստաթուղթը ստորագրել են ինստիտուտի
58 աշխատակիցներ]:

27.07.1988 թ.

ՀԱՍ, ֆ. 207, ց. 44, գ. 19, թ. 51–53:

№ 87

ՀԽՍՀ ԳԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՒԵԿՏԻՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ԳՐՈՍԻԿՈՅԻՆ
ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ
ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՍԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
Մ. ՅՈՒՁԲԱՇՅԱՆԻՆ

1988 թ. հուլիսի 27-ին տեղի ունեցավ ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կոլեկտիվի ընդհանուր ժողով: Ժողովը քննարկեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի որոշումը Լեռնային Ղարաբաղի մասին և ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի հուլիսի 23-ի որոշումը:

Ժողովը միաձայն որոշեց՝

1. Հայ ժողովուրդը երբեք չի հաշտվի Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ մնալու փաստի հետ, ուստի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշման առաջին կետը չենք կարող համարել վերջնական: Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը՝ նախատեսված ԽՍՀՄ Սահմանադրության 70 հոդվածով, ամբողջությամբ հանգեցվում է Ադրբեջանի հանրապետության տերիտորիալ անձեռնմխելիության հարցին և ի չիք է դարձնում գործող սահմանադրության պայմաններում որևէ սոցիալիստական ազգի ինքնորոշման լենինյան իրավունքը: Լեռնային Ղարաբաղը վարչականորեն մտցվել է Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ 1921 թվականի հուլիսի 5-ին, ինքնավար մարզ, իր սեփական պատմական տարածքով, և ոչ մի դեպքում այդ տարածքը չի կարող համարվել Ադրբեջանի տերիտորիայի անբաժանելի մասը:

2. ՀԿԿ Կենտկոմի հուլիսի 23-ի որոշումը հակասում է Հայաստանի Գերագույն խորհրդի հունիսի 15-ի նստաշրջանի միաձայն ընդունված որոշմանը, ինչպես և ազգային քաղաքական այն պլատֆորմին, որով հայ ժողովրդի պատվիրակները հանդես եկան ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թվականի հուլիսի 18-ի նիստում՝ արտահայտելով ողջ հայ ժողովրդի և հայ կոմունիստների միասնական կամքը:

3. Դատապարտել բոլոր այն փորձերը, որոնք նպատակ ունեն ըստ ամենայնի համաժողովրդական, առաջադիմական դարաբաղյան շարժումը և «Ղարաբաղ» կոմիտեի անդամների հայրենամուտ գործունեությունը որակել իբրև հակավերակառուցողական, ծայրահեղական, հակապետական և ազգայնամոլական: Մեղադրել կոմիտեի անդամներին, նշանակում է մեղադրել ողջ հայ ժողովրդին, քանի որ նրանք միշտ եղել են ժողովրդի հավաքական կամքի արտահայտիչներ:

4. Արձանագրել, որ վերջին ամիսներին Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած զանգվածային գործադուլներն արդյունք են ոչ թե առանձին «անպատասխանատու անձանց» կոչերի և հրահրումների, այլ Լեռնային Ղարաբաղի արդարացի հարցի նկատմամբ ցուցաբերած ոչ ճիշտ դիրքորոշման, ինչպես նաև հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ոճիրների՝ Սուսգայիթից մինչև Մասիսի շրջանում հայ կանանց զանգվածային թունավորումը քիմիական նյութերով:

5. Պահանջում ենք նաև դադարեցնել «Զվարթնոցի» հետ կապված ԽՍՀՄ պետական անվտանգության քննչական գործու-

նեությունը՝ խաղաղ ցույցի դուրս եկած հայ երիտասարդների նկատմամբ: Չի կարելի պղտորել երկրի դեմոկրատական զարգացման հեռանկարային խնդիրներն իրենց ուսերին առնող երիտասարդների անբիծ հոգիները: Չէ՛ որ դրանք մեր երեխաներն են:

Ժողովի նախագահ՝ Ավետիսյան Չ.
Քարտուղար՝ Սայադյան Վ.

ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 658, ք. 72–73:

№ 88

**ԼԵՆԻՆԻ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ
ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ
ՊԱՀԱՆՁԸ**

**ՀԿԿ ԿԵՆՏԿՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀՄՏՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ
ՀԽՏՀ ՊԵՏ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՍԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
Մ. ՅՈՒՉԲԱՇՅԱՆԻՆ**

Վերջին մի քանի ամիսների ընթացքում ողջ հայ ժողովուրդը ելել է պայքարի՝ հանուն Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու արդար գործի: Այդ պայքարի արդարացիության օգտին է արտահայտվել նաև հանրապետության բարձրագույն իշխանությունը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հունիսի 15–ի համապատասխան որոշմամբ:

Ղարաբաղյան շարժման առաջին օրերին կենտրոնական հեռուստատեսության և մամուլի կողմից շարունակ միակողմանի և ստահող տեղեկություններ են տարածվում ինչպես համաժողովրդական պայքարի բնույթի, այնպես էլ անհրաժեշտաբար այդ շարժումից ծնված և նրա նպատակների արտահայտիչ դարձած անձանց վերաբերյալ:

Դառնալով ժողովրդական շարժման կամքի արտահայտիչն ու խոսափողը՝ «Ղարաբաղ» կոմիտեն կարողացել է ժողովրդավարական միջոցներով համախմբել շարժումը և կանխարգելել հնարավոր պայթյունավտանգ ծայրահեղությունները:

Դա առավել գնահատելի է, եթե հաշվի առնենք այն ծանր կացությունը, որ ստեղծվել էր Ադրբեջանական ԽՍՀ-ում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների ու մասսայական ինֆորմացիայի միջոցների խեղաթյուրված և սադրիչական հաղորդումների հետևանքով:

Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ միտինգների ժամանակ ժողովրդի կողմից առաջ քաշված գործադուլի պահանջը, որպես պայքարի ծայրահեղ միջոց, Կոմիտեի կողմից ընդունվում էր մեծ զսպվածությամբ և իրադրության լրջության գիտակցությամբ: Ինչ վերաբերում է «Զվարթնոց» օդանավակայանում տեղի ունեցած ողբերգական դեպքերին, Կոմիտեն արեց ամեն ինչ դրանք կասեցնելու համար: Դա քաջ հայտնի է միտինգների մասնակիցներին, և այդ մասին նշվեց նաև Երևանի քաղկոմի քարտուղարի այդ դեպքերին նվիրված հեռուստատեսային ելույթում:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի որոշումից հետո ավելի է ասստկացել մասսայական ինֆորմացիայի միջոցների բացահայտ թշնամական վերաբերմունքը «Ղարաբաղ» կոմիտեի անդամների նկատմամբ: Մենք մտավախություն ունենք, որ դա ազդանշան է ազնիվ և վերակառուցման իսկական ջատագով դարձած անձանց նկատմամբ ռեպրեսիաներ սկսելու համար: Համարում ենք, որ նման միջոցառումները փաստորեն ուղղված կլինեն մեր երկրում կյանքի իրավունք ձեռք բերող դեմոկրատիայի և հրապարակայնության սկզբունքների դեմ: Ժողովրդի նվիրական իղձերն արտահայտող շարժման ղեկավարներ դարձած անձանց նկատմամբ հալածանքների կիրառումն իր հերթին կարող է հանգեցնել իրադրության սրման և աննախատեսելի հետևանքների:

Ուստի, ՀԽՍՀ Բյուրականի աստղադիտարանի կոլեկտիվը, միանալով ողջ ժողովրդի պահանջին, կոչ է անում խիստ դատապարտել և կասեցնել նրանց հանդեպ կատարվող ոտնձգությունները:

ՀԽՍՀ ԳԱ Բյուրականի աստղադիտարանի կոլեկտիվ:

28.07.1988 թ.

ՀԱՄ, ֆ. 207, ց. 44, գ. 16, թ. 90-91:

№ 89
РЕЗОЛЮЦИЯ
СОБРАНИЯ СОТРУДНИКОВ ЕРЕВАНСКОГО
НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО И
ПРОЕКТНОГО ИНСТИТУТА
АВТОМАТИЗИРОВАННЫХ СИСТЕМ
УПРАВЛЕНИЯ ГОРОДОМ

ПРЕЗИДИУМУ ВЕРХОВНОГО СОВЕТА АРМ. ССР
ЦК КП АРМЕНИИ

Собрание сотрудников ЕрНИПИ АСУГ, обсудив сложившуюся в республике обстановку в связи с вопросом Нагорного Карабаха, приняло решение:

1. Строго осудить травлю комитета “Крунк’ и армянского комитета карабахского движения, организованную средствами массовой информации. Будучи выдвинутыми народом члены названных комитетов на протяжении всего периода напряженных событий в связи с вопросом Нагорного Карабаха своими действиями изъясляли волю народа, способствовали разрядке обстановки и предупреждению возможных провокационных действий со стороны отдельных групп лиц зачастую в условиях, когда действия официальных органов в том же направлении оказывались безрезультатными. Сейчас, когда обстановка относительно стабилизирована, официальные органы, выйдя из состояния литургического оцепенения, пытаются взвалить основную вину за свою несостоятельность на названные комитеты, одновременно присваивая себе часть их заслуг. В связи с этим считаем необходимым обратиться к Президиуму Верховного Совета Арм. ССР с требованием оградить членов армянского комитета карабахского движения от дальнейших нападков со стороны средств массовой информации и других официальных органов.

2. Требовать передачи судебного процесса по поводу февральских событий в Сумгаите в ведение Верховного Суда СССР. Расчленение и растаскивание дела по областным судам РСФСР способствует представлению организованной варварской акции бандитов в виде отдельных хулиганских поступков, в корне искажая суть

дела, и не позволяет выявить истинных виновников – организаторов сумгаитской трагедии.

3. Осудить средства массовой информации и, в первую очередь, центральное телевидение и центральную прессу, которые на протяжении пяти месяцев предвзято и искаженно отражали события в Армении в связи с вопросом Нагорного Карабаха. Постыдная антиармянская кампания, развязанная средствами массовой информации, не могла отрицательно не повлиять на ход заседания Президиума Верховного Совета СССР от 18 июля 1988 г.

4. Осудить Постановление Президиума Верховного Совета СССР от 20.07.88 г. в отношении Паруйра Айрикяна. Названное решение грубо нарушает принцип презумпции невиновности, объявляя помилование человеку, который был не осужден, а лишь задержан без широкой огласки его проступков, которые якобы наказуемы в соответствии со статьей 206 УК. Таким образом, в условиях гласности остается неясным, почему Паруйра Айрикяна лишают гражданства СССР, а не судят публично в соответствии с законом.

Осудить в этой связи молчание Президиума Верховного Совета Арм. ССР, гражданином которой Паруйр Айрикян является в первую очередь

Принято на собрании сотрудников Ереванского научно–исследовательского и проектного института автоматизированных систем управления городом.

Протокол № 3 от 25 июля 1988 г.

Председатель собрания **Дувалян А.**
Секретарь собрания **Хачатрян Н.**

01.08.1988 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 17, л. 34–35.

№ 90
РЕЗОЛЮЦИЯ
СОБРАНИЯ КОЛЛЕКТИВА ЕРЕВАНСКОГО НПО
“АВТОМАТИКА”

ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР
ГРОМЫКО А.А.
ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА
АРМЯНСКОЙ ССР ВОСКАНЯНУ Г.М
В РЕДАКЦИЮ ГАЗЕТ “ИЗВЕСТИЯ” И “СОВЕТАКАН АЙАСТАН”

Коллектив Ереванского НПО “Автоматика”, обсудив на общем собрании постановление Президиума Верховного Совета СССР от 18 июля 1988 г. “О решениях Верховных Советов Армянской ССР и Азербайджанской ССР по вопросу о Нагорном Карабахе”, выражает свое категорическое несогласие с пунктом 1 данного постановления, который коренным образом противоречит духу демократии и одному из основных принципов ленинской национальной политики — праву наций на самоопределение.

Подобное рассмотрение вопроса о Нагорном Карабахе создает превратное впечатление посягательства Армянской ССР на территорию Азербайджанской ССР.

В своем решении Президиум Верховного Совета СССР должен был исходить в первую очередь из постановлений сессий областного Совета народных депутатов НКАО от 20 февраля 1988 г., 21 июля 1988 г. и 15 июля 1988 г., а не из постановлений сессий Верховных Советов Армянской ССР от 15 июня 1988 г. и Азербайджанской ССР от 17 июня 1988 г., в которых лишь было выражено отношение указанных союзных республик к данному вопросу.

Считаем неправомерным ссылку в постановлении Президиума Верховного Совета СССР на ст. 78 Конституции СССР о невозможности изменения территории союзной республики без ее согласия, а также игнорирование ст. 70, в которой четко изложен основополагающий принцип добровольного объединения наций в единую социалистическую федерацию.

Вопрос о Нагорном Карабахе не должен рассматриваться как территориальное притязание одной союзной республики к другой, а должен быть рассмотрен как добровольный выход автономного формирования из состава одной союзной республики и вхождение

в состав другой, в соответствии с закрепленным в Конституции СССР правом каждого народа на самоопределение.

Считаем, что в создавшейся конфликтной ситуации окончательное решение вопроса о Нагорном Карабахе находится в компетенции только сессии Верховного Совета СССР.

Выражаем уверенность, что специальная комиссия при Совете национальностей Верховного Совета СССР глубоко и всесторонне изучит все проблемы по Нагорному Карабаху и выйдет с соответствующими предложениями для рассмотрения на сессии Верховного Совета СССР.

Коллектив Ереванского НПО “Автоматика” полностью одобряет решения сессий областного Совета народных депутатов НКАО и Верховного Совета Армянской ССР по вопросу о Нагорном Карабахе, а также выступления на заседании Президиума Верховного Совета СССР от 18 июля 1988 г. всех делегатов от Армянской ССР и НКАО.

Коллектив объединения считает необходимым сообщить также свое отношение к деятельности комитета “Карабах”. Комитет “Карабах” свою деятельность осуществляет в рамках закона, выражает волю и чаяние всего армянского народа. Любые оскорбительные замечания в адрес комитета со стороны средств массовой информации являются унижением для нашего народа.

Председатель собрания **Рубинян Г.В.**
Секретарь собрания **Маркосян В.С.**

01.08.1988 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 17, л. 1–2.

№ 91

ՀԽՍՀ ԳԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՒԵԿՏԻՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱԶԵՎԸ

ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ
ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՈՒՋԻՆ ԶԱՐՏՈՒՂԱՐ
Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Ս.թ. հուլիսի 28-ին ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կոլեկտիվի ընդհանուր ժողովը, քննարկելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագա-

հուբյան 1988 թ. հուլիսի 18-ի որոշումը «Լեռնային Ղարաբաղի հարցի առթիվ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին», միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը:

1. Հավանություն տալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի նիստում ՀԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի պատվիրակների առաջադրած պահանջներին՝ դրանք համարելով միանգամայն արդարացի և օրինական: Պաշտպանել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի արտահերթ նիստում կայացրած որոշումը:

2. Հավանություն չտալ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. հուլիսի 18-ի որոշման առաջին կետին, քանի որ դրույթը (ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածը), որի հիման վրա ընդունվել է որոշման այդ կետը, հակասության մեջ է նույն սահմանադրության 70-րդ հոդվածին և ազգերի ինքնորոշման լեռնային սկզբունքին:

3. Վճռական բողոք հայտնել կենտրոնական հեռուստատեսությանը և կենտրոնական մամուլին, որոնք միակողմանի, խեղաթյուրված մեկնաբանություն են տվել Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջը ծավալված դեպքերին, Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին, ճշմարտապես չեն բացահայտել Լեռնային Ղարաբաղի հայության պահանջները և ընդվզումի բուն պատճառները, չեն դատապարտել Մուսկալիթի ողբերգության հանցագործներին: Մասսայական ինֆորմացիայի այդ դիրքորոշումն է եղել հայ ժողովրդի հանիրավի վարկաբեկման պատճառը, որն իր հերթին եղավ հայության բողոքի մասսայական ցույցերի եթե ոչ գլխավոր, ապա գլխավոր պատճառներից մեկը:

4. Արվեստի ինստիտուտի կոլեկտիվն իր խոր անհանգստությունն է հայտնում Երևանում անցկացված ցույցերի կազմկոմիտեի անդամների հետագա ճակատագրի նկատմամբ՝ գտնելով, որ նրանց գործունեությունը չի կրել քաղաքական արատավոր բնույթ, ուստի և նրանց հանդեպ հարկավոր է հանդես բերել պետականորեն բարյացակամ վերաբերմունք: Ավելին, կարծում ենք, որ կազմկոմիտեի անդամների ուժերն ու կարողությունները պետք է ի սպաս դնել հասարակական օգտաշահ գործունեության և Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծման գործին՝ պետական օրինապահության սահմաններում:

5. Արվեստի ինստիտուտի կոլեկտիվը գիտակցում է, որ Լեռնային Ղարաբաղի նոր ստատուսը պարտականություններ է դնում նաև գիտության և մշակույթի ասպարեզի աշխատողների վրա: Ուստի և հանձն է առնում գործունեության լայն ծրագիր, որի մեջ նախատեսվում են՝

ա. Լեռնային Ղարաբաղի նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրություն:

բ. Երաժշտական ֆոլկլորի ուսումնասիրություն:

գ. Կիրառական արվեստի ուսումնասիրություն:

դ. Գիտական նստաշրջաններ Ստեփանակերտում:

ե. Ստեփանակերտի թատրոնի ներկայացումների քննարկում և մասնագիտական օգնություն թատրոնին, ինչպես նաև մարզի գեղարվեստական ինքնագործունեությանը:

Այս միջոցները պետք է ծառայեն Լեռնային Ղարաբաղի մշակույթը հայ մշակույթի ընդհանուր ոլորտի մեջ առնելու նպատակին, որը համապատասխանում է մարզի զարգացման վերաբերյալ կայացված որոշումներին:

Ժողովի նախագահ՝ **Ղաֆաղարյան Կ.**
Քարտուղար՝ **Գրիգորյան Ա.**
Արհկոմի նախագահ՝ **Չթյան Ա.**

04.08.1988 թ.

ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 663, թ. 43-44:

№ 92

ՀԽՍՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՊԱՀԱՆՁԸ

ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔԻ ՆԱԽԱԳԱՀ, ՀԽՍՀ ԳԱ ԱԿԱԳԵՄԻԿՈՍ
Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
ՆԱԽԱԳԱՀ, ԽՍՀՄ ԳԱ ԱԿԱԳԵՄԻԿՈՍ
Մ. Ս. ԿԱՊԻՑԱՅԻՆԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՀ
Հ. Մ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ
ՀԿԿ ԿԿ ԱՈԱԶԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
«ՊՐԱՎԴԱ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
«ԻԶՎԵՍՏԻԱ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
«ԿՈՄԻՏԱՍ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

1988 թ. հուլիսի 18-ի ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի «Հայկ. ԽՍՀ Գերագույն խորհրդի և Ադրբ. ԽՍՀ Գերագույն խորհրդի Լեռնային Ղարաբաղի առթիվ որոշման» մասին կայացրած անարդարացի որոշմանը հետևեց մասսայական տեղեկատվության միջոցների կողմից հետապնդման, հերյուրանքի և բացահայտ լուտանքների լայն կոմպանիա՝ ուղղված «Կռունկ» և «Ղարաբաղ» կոմիտեների անդամների դեմ: Այսինքն՝ ընդեմ ժողովրդի կողմից բազմահազարանոց միտինգներում ընտրված, հայ ժողովրդի լավագույն ներկա-

յացուցիչների, որոնց գործունեությունը երբեք չի անցել Խորհրդային Սահմանադրության սահմանները: Հայ հասարակությունն ընկալում է այդ կոմպանիան որպես հարձակումներ և հետապնդում՝ ուղղված ողջ հայ ժողովրդի դեմ:

«Ղարաբաղ» կոմիտեի անդամներից երկուսը՝ պատմ. գիտ. թեկնածու, ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Ա. Հ. Հակոբյանը և բան. գիտ. դոկտոր, Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող Լ. Հ. Տեր-Պետրոսյանը (վերջինս ԱՀԱ-ի հայկական բաժանմունքի բանասիրական բաժնի ղեկավարն է) մեր գործընկերներն են: Նրանք ազնիվ, սկզբունքային, արժանավոր մարդիկ են, քաջ հայտնի և բարձրագույնս գնահատվող մեր երկրի և արտասահմանյան արևելագիտական շրջանակներում: Մենք մեր պարտքն ենք համարում մեր բարձր գնահատականը տալու «Ղարաբաղ» կոմիտեի ևս մեկ անդամ՝ պատմաբան-ուցիողուզ Հ. Գալստյանի անձին և մասնագիտական հատկանիշներին: Նրանք բոլորը վերակառուցման և իսկական ժողովրդավարության ակտիվ կողմնակիցներ են, ԽՄԿԿ և խորհրդային կառավարության կողմից սկսած՝ խորհրդային հասարակության նորացման արշավի ջատագովներ:

Համաժողովրդական հարգանքի և վստահության արժանացած մարդկանց դեմ հարձակումների բացահայտ ստալինյան ոգին խիստ անհանգստություն է առաջացրել Հայաստանի արևելագետների մեջ, որոնք լի են վճռականությամբ՝ անելու իրենցից կախված ամեն ինչ՝ մեր հասարակության մեջ ստալինիզմի վերակենդանացումը կանխելու համար:

Մենք պահանջում ենք պաշտպանել «Ղարաբաղ» և «Կռունկ» կոմիտեների անդամներին քաղաքական և այլևայլ պիտակներից և օրեկտիվ տեղեկություններ տալ նրանց գործունեության մասին:

05.08.1988 թ.

ՀԱՍ, ֆ. 1, ց. 127, գ. 651, թ. 50:

**ԵՐԵՎԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՅ ՄԱՅՐԵՐԻ ԵՎ
ԿԱՆԱՆՑ ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ ԲՈՂՈՔԸ**

ՀԽԱՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ

Մենք՝ հայ մայրերս և կանայք, մեր վրդոհմունքն ենք արտահայտում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի նիստի որոշման առթիվ, որով մերժվեց Ղարաբաղի վերամիավորումը Հայաստանին:

Մեզ հայտնի չէ, թե Վարդգես Պետրոսյանն ինչպես պատասխանեց ընկ. Մ. Գորբաչովի այն հարցին, թե Ղարաբաղի հարցի դրական լուծումից հետո մտածո՞ւմ եք, թե ինչ կապասվի Ադրբեջանում բնակվող հայերին: Համենայնդեպս, այդ հարցին պատասխանում ենք մենք՝ հայ կանայքս. ընկ. Գորբաչով, իսկ երբ Սումգայիթում ադրբեջանցիները 3 օր շարունակ, ոչ թե մի քանի ժամ, սպանում, բռնաբարում ու տանջամահ էին անում անմեղ հայ բնակչությանը, երբ Ադրբեջանի տարբեր շրջաններում, ճանապարհներին հարձակվում էին հայերի վրա, ծեծում, սպանում էին ու ջարդում ավտոմեքենաները, երբ Մասիսում և Երևանում թունավորում էին հայ կանանց, ինչո՞ւ չէին մտածում, որ Հայաստանում նույնպես մեծ թվով ադրբեջանցիներ են ապրում, ինչ կապասվի նրանց: Սակայն, ինչպես տեսաք, հայ ժողովուրդը չդիմեց պատասխան քայլի մնալով իր բարձրության վրա:

Ի՞նչ է, Ադրբեջանը խորհրդային հանրապետություն չէ՞, անարխիա՞ է տիրում այնտեղ, այդ պոռոտախոս ու մեծամիտ վեզիրովները մի թե չեն կարող զսպել իրենց արնախում հայրենակիցներին:

Եվ այդ անհանգստությունն արտահայտում է մի հզոր պետության դեկավար, որը ցանկացած շրջանում կարող է անմիջապես զորք մտցնել և կարգ ու կանոն հաստատել:

Այդ նիստում հայտարարվեց, թե Ղարաբաղի հարցում հաղթող ու պարտվող չի լինի: Դա միայն ասվեց: Իրականում, մինչ մենք՝ հայերս, սրտի նուպաներով անքուն գիշեր անցկացրինք, իսկ առավոտյան՝ սպորտային լեզվով ասած, նակաուտի մեջ էինք. մարդասպան ադրբեջանցիները տոնում էին իրենց հաղթանակը, որն էլ Մոսկվան մեծ բավականությամբ ցուցադրում էր:

Եվ այս բոլորից հետո մեր կառավարությունը պահանջում է աշխատավորական կոլեկտիվներից ժողովներ գումարել և ողջունել

հուլիսի 18-ի Գերագույն Խորհրդի որոշումը: Ինչպե՞ս կարող է հաշը, որն ունի ազգային և մարդկային արժանապատվություն, այդպես կեղծի ու ստորացնի իր հոգին:

Այն դեպքում, երբ Ադրբեջանի ղեկավարությունը՝ միացած իր ժողովրդին, ամուր կանգնած է նրա թիկունքին ու թույլ չի տալիս ոչ մեկին դատապարտելու իր ազգային տոկալի հանցագործությունները, Հայաստանի ղեկավարությունը հեռացավ իր քաղաքակիրթ ժողովրդից՝ բռնելով հակահայկական դիրքորոշում: Նա ոչ միայն չպաշտպանեց մեր ազնիվ ու արդարացի պայքարը, այլև եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ կազմակերպելու մեր ազգը վարկաբեկող ու ստորացնող ոչ ճիշտ հաղորդումների:

Գրանով չբավարարված, առանց խղճի խայթ զգալու, ձեռնարկում են ռեպրեսիաներ մեր ազնվագույն ու սկզբունքային հայրենակիցների նկատմամբ, միայն նրա համար, որ նրանք ճիշտ են խոսում:

«Ղարաբաղ» կոմիտեի ակտիվիստներին կայցնելով զանազան պիտակներ՝ ծայրահեղականներ, դեմագոգներ, կաշառակերներ և այլն, և այլն, մեղադրում են նրանց, իբրև այդ անկոչ կոմիտեն է ժողովրդին մղում «անօրինական» գործողությունների:

Այդ ընկերները մոռանում են մի անհերքելի ճշմարտություն, որ ժողովուրդը տգետ ու միամիտ չէ, նա իմաստուն է և ամեն մի պատահական մարդու հետևից չի գնում: Իսկ «Ղարաբաղ» կոմիտեն ինքնակոչ չէ, նա ժողովրդի կամքով և ժողովրդի միջից ընտրված այն կիրթ, ազնիվ ու հայրենասեր մտավորականության մի ջոկատ է, որն ազգի խնդրանքով 5 ամսից ի վեր ղեկավարում է մեր Ղարաբաղյան արդար պայքարը, տալիս է ճիշտ ինֆորմացիա և շարժումը պահում է սահմանադրության շրջանակներում: Այս պայքարի ընթացքում մեր ազգը կարծեք սրբագրվել, դարձել է ավելի համախմբված, ավելի կիրթ ու բարոյական մի ժողովուրդ, որով հիացած է ողջ աշխարհը:

Կոմիտեին անհիմն մեղադրում են նաև «Զվարթնոց» օդանավակայանում կատարված դեպքի կապակցությամբ: Սակայն, բոլորիս պարզ է, որ դա մի կազմակերպված պրովոկացիոն ընդհարում էր անգեն երիտասարդների ու զինված զորքի միջև՝ նպատակ դնելով զոնե մի սև բիծ զգել գործադուլի մասնակիցների վրա: Ինֆորմացիայի բոլոր միջոցները զանազան տարբերակներով մոտ 2 ամիս դատապարտում էին մեր երիտասարդությանը՝ ցուցադրելով ինչ որ երկաթե ձողերի ու դանակների հավաքածու, այն դեպքում,

երբ այդ օրը մեր երիտասարդների մոտ անգամ պանիր կտրելու համար դանակ չի գտնվել:

Եվ վերջապես, մի՞ թե «Զվարթնոց»-ի դեպքը ավելի սոսկալի էր, քան Սումգայիթի ցեղասպանության փորձերը, որտեղ սպանվեցին ոչ միայն մի քանի տասնյակ անմեղ հայեր, այլև շատ ռուս զինվորներ: Եվ այս հրեշավոր հանցագործությունները կառավարության և մամուլի կողմից ըստ արժանվույն չդատապարտվեց և լռության մատնվեց:

Մինչև օրս լռության են մատնված նաև Մասիսի դեպքերը և օգտագործված թույնի բաղադրությունը:

Մամուլում ոչ մի ինֆորմացիա չի տրվել Լեռնային Ղարաբաղում աշխատող մի խումբ ռուս հարբած լրագրողների մասին, որոնց դեմ դատական գործ է հարուցված:

Եվ այս հակահայկական կոմպանիան տարվում է Լեռնիյան ազգային քաղաքականության անունից, վերակառուցման ու հրապարակայնության անունից:

Եթե Հայաստանի ղեկավարությունը ցանկանում է, իրոք, վերակառուցել մեր հանրապետությունը, այն մաքրել կաշառակերությունից, կոռուպցիայից, կեղծիքներից և այլ նեգատիվ երևույթներից, նա պետք է անհապաղ փոխի իր դիրքորոշումը՝ միանա իր ժողովրդին, վերջ տա «Ղարաբաղ» կոմիտեի և մյուս ակտիվիստների նկատմամբ տարվող ռեպրեսիաներին ու վիրավորանքներին և հաշվի նստի նրանց հետ, քանզի նրանք մեր հանրապետության վերակառուցման դրոշակակիրներն են: Նրանք լիազորված են ազգի կողմից և պաշտպանում են ազգի շահերը:

Մենք՝ հայ մայրերս ու կանայքս, պահանջում ենք մեր որոշ ղեկավար աշխատողներից իրենց աթոռները չհակադրեն հայ ժողովրդի շահերին և հանգիստ թողնեն մեր հարգարժան ակտիվիստներին: Սա 37 թիվը չէ և մենք էլ 37 թվի միամիտ ու խեղճ հայերը չենք, որ նստենք ու նայենք թե ինչպես են մեր սկզբունքային հայրենակիցների հետ հաշվեհարդար տեսնում:

Ի պաշտպան Ղարաբաղի և Ղարաբաղյան շարժման ակտիվիստների կանգնած է ողջ հայությունը:

[Շուրջ 50 ստորագրություն]:

Օգոստոս, 1988 թ.

ՀԱՄ, ֆ. 207, ց. 44, գ. 46, թ. 1-3:

**ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 24 ԲԳ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ**

Ընկերներ և հայրենակիցներ.

Պատմական դարձակետ կ'ապրի Հայոց նորագոյն պատմութիւնը: Հայկական Հարցը մտած է նոր եւ բախտորոշ փուլի մը մէջ:

Ըստ էութեան, ցարդ ոչինչ փոխուած է անշուշտ այն առանձնաշնորհեալ դիրքէն՝ զոր Թուրքիան կը վայելէ Արեւմտեան եւ Արեւելեան զինակցութեանց միջեւ, եւ որ հիմնական խոչընդոտն է Հայ Դատի բարենպաստ լուծման: Ամերիկայի Միացեալ Նահանգներն ու անոր դաշնակից պետութիւնները, շարունակելով Թուրքիան պատուար նկատել Խորհրդային Միութեան ծաւալման թէ անոր ազդեցութեան գօտիի ընդարձակման դէմ, թուրք պետութեան կ'ընծայեն տնտեսական, ռազմական եւ ընկերային լայն օժանդակութիւն: Իսկ Խորհրդային Միութիւնը, մղուած իր սեփական հաշիւներէն, որոնց մէջ կարեւոր տեղ ունի իր տարածքի թրքօ-քաքար ժողովուրդներն ու Թուրքիան իրարու շողկապող համաթուրանական յարանուն տրամադրութիւններուն հաշուառումը, ոչ միայն բացայայտօրէն չի հակադրուիր թուրք ցեղապաշտ պետութեան, այլեւ կը շարունակէ զայն պարբերաբար դարպասել: Հակադիր ուժերու այս բարդ հաւասարակշռութեան մէջ է, որ հայ ժողովուրդը պարտաւորուած է գործել ի խնդիր ազգային-քաղաքական առաջադրանքներու իրականացման:

Բայց եթէ Հայ Դատի ամբողջական լուծման հիմնական դժուարութիւնները տակաւին վերացած չեն, այլ նոր կացութիւններ, միջազգային թէ ազգային գետնի վրայ, նոր յոյսեր կը ներշնչեն հայութեան՝ իր անժամանցելի իրաւունքներու բազմակողմանի հետապնդման եւ աւելի բարենպաստ արդիւնքներու կարելիութեան գծով:

Իրօք, վերջին տարիներուն, Արեւմտեան Չինակցութեան եւ Խորհրդային Միութեան միջեւ երբեմնի ծայրայեղ լարուածութիւնը որոշ մեղմացում կրեց՝ խորհրդային նոր ղեկավարութեան կողմէ ձեռնարկուած ներքին թէ արտաքին յեղաշրջող բարեփոխումներուն բերումով: Վերակառուցման (փերեսթրոյքա), հրապարակայնութեան (կլասնոսթ) եւ ժողովրդավարացման (դեմոկրատիզացիա) կորպաչելեան ներքին կարգախօսները, տնտեսական որոշ ազատութիւններ, ինչպէս նաեւ՝ արտաքին ճակատի վրայ՝ աստիճանական զինաթափման ճիգերը, նոր եւ աւելի արժանավայել կեանքի մը

խոստումը կու տան խորհրդային քաղաքացիներուն եւ ժողովուրդներուն: Նոր պայմանները Խորհրդային Հայաստանի եւ Անդրկովկասի չորսուկէս միլիոն հայութեան համար եւս ստեղծեցին հաւաքական ինքնաշէշտման եւ աւելի ազատ զարգացման զգալի կարելիութիւններ:

Ուստի, Հ. Յ. Դաշնակցութիւնը դրական մօտեցում միայն կրնայ ունենալ Խորհրդային Միութեան վերակառուցման, հրապարակայնութեան եւ ժողովրդավարացման քաղաքականութեան, ինչպէս նաեւ տնտեսական բացման եւ ազատութիւններուն նկատմամբ, եւ իր կարելիութեանց սահմաններուն մէջ զօրավիզ կը կանգնի անոնց:

Ներազգային ճակատի վրայ, մինչեւ տակաւին վերջերս՝ Հայաստանի ժողովուրդն ու պետութիւնը գրկուած ըլլալով քաղաքական ազատ արտայայտութեան ամէն կարելիութենէ, Հայ Դատի հետապնդման միակ գործօնը արտախորհրդային Սփիւռքի հայութիւնն էր: Եւ հարկ է նշել, որ հակառակ միջազգային կաշկանդումներուն եւ յարակից բոլոր դժուարութիւններուն, վերջին 15–20 տարիներուն աւելի շեշտակի կերպով շրջայազերծուած Հայ Դատի պայքարը, իր ցուցական, քարոզչական, յարաբերական եւ դիւանագիտական երեսներով, տուաւ շօշափելի արդիւնք՝ մեր ազգային իրաւունքները ընդհանրապէս եւ հայութեան կրած Յեղասպանութիւնը յատկապէս համաշխարհային հանրային կարծիքին ծանօթացնելու տեսակէտէն:

Բայց Լեռնային Դարաբաղի հայութեան 1988 թ. փետրուարի արդար ընդվզումը եւ Խորհրդային Հայաստանի ժողովուրդին ամբողջական զօրակցութիւնը Արցախեան շարժման, Էսպէս զօրացուցին Հայ Դատի հետապնդման կարելիութիւնները՝ անոնց տալով բոլորովին նոր տարողութիւն: Հայրենի մեր ժողովուրդը փաստեց, որ հակառակ տասնամեակներու իր լռութեան՝ դաժան վարչակարգի մը ներքեւ, ինք լրիւ պահած է գիտակցութիւնը հայ ազգային իրաւունքներուն եւ ունի վճռական տրամադրութիւնը զանոնք հետապնդելու՝ ըստ ամենայնի առողջ գործելակերպով եւ միակամ կեցուածքով: Հայաստանի հայութեան այդ վարմունքը, որ իր անկաշկանդ արտայայտութիւնը գտաւ Խորհրդային ներքին նոր քաղաքականութեան ստեղծած պայմաններուն մէջ, Էական կարեւորութիւն ներկայացնող դարձակէտ կը կազմէ մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան եւ Հայ Դատի հետապնդման մէջ: Այն կոչուած է իր պատմաքաղաքական բովանդակ նշանակութիւնը պահելու, եթէ նոյնիսկ Խորհրդային ներքին բարեփոխութեանց մասնակի թէ ամ-

բողջական վերացումով, այդպիսի կեցուածքներ այսուհետեւ բռնի ուժով արգիլուին հայրենի ժողովուրդին: Հայաստանը՝ իր շուրջ երեքուկէս միլիոն գրեթէ միաձոյլ հայութեամբ, քաղաքական հիմնական գործօն է այլեւս, որուն խաղալիք դերը, Հայ Դատի հետապնդման եւ ի մասնաւորի՝ Անդրկովկասի հայապատկան հողամասերու պահանջատիրութեան գծով, պիտի ունենայ վճռական նշանակութիւն:

Միս կողմէ, սակայն, համաթուրանական վտանգը այսօր նոյնքան առկայ է որքան երէկ: Հարկ է բացայայտել այդ վտանգը կարելի բոլոր միջոցներով եւ բոլոր մակարդակներուն վրայ, եւ խարանել ըստ ամենայնի ժամանակավրէպ ցեղապաշտ այդ վարդապետութիւնը՝ Հայաստանի եւ հայ ժողովուրդին համար աղիտալի իր առաջադրանքներով հանդերձ: Հարկ է մանաւանդ ըլլալ աշխուրջ ու շրջահայեաց՝ Հայաստանի եւ Անդրկովկասի հոծ հայութիւնը գերծ պահելու համար նոր փորձանքներէ:

Բոլոր պարագաներուն մէջ, Հայկական Արցախի եւ հայրենի հայութեան ազգային պահանջատիրութեան սքանչելի զարթօնքը Հ. Յ. Դաշնակութիւնը կը դնէ վերանորոգուող ու մի շտ աւելի շեշտուող պարտաւորութեանց դիմաց: Շարունակելով գործել Հայ Դատի հետապնդման այլազան մարզերուն մէջ, միշտ պահանջատէր մնալով Թուրքիայէն, արեւմտեան պետութիւններէն եւ Խորհրդային Միութենէն՝ Արեւմտահայաստանի ազատագրութեամբ Հայաստանի եւ հայ ազգի վերամիաւորման գծով, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը վերահաստատէ իր անմիջական պարտաւորութիւնները՝ հայրենի ժողովուրդին նկատմամբ. լրիւ զօրավիզ հանդիսանալ անոր տրամադրութիւններուն եւ ձգտումներուն, անոր ազգային ազատութիւններուն, ընկերային եւ քաղաքական պահանջներուն, ջանալ ամէն կերպով, որ առողջ եւ իրատես հունի մէջ մնայ հայրենի պահանջատիրութեան շարժումը, զայն ապաժամ ու վտանգաւոր նախաձեռնութիւններէ հեռու պահելու նախանձախնրութեամբ, օժանդակել Հայաստանի եւ Հայկական Արցախի տնտեսութեան բարուքման ու ծաղկումին ու նպաստել, վերջապէս, ազգային-հաւաքական շահերն ամէն բանէ գերադասող հայրենի արժանատր ու բոլորանուէր իշխանութեան մը ստեղծման:

Հ. Յ. Դաշնակցութիւնը վստահ է, որ հայ ազգային իրաւունքներու հետապնդման եւ հայրենի ժողովուրդին զօրակցութեան ու օժանդակութեան իր ճիգերուն մէջ ինք պիտի շարունակէ վայելել բովանդակ հայութեան անվերապահ գործակցութիւնը: Ղարաբաղի եւ Հայաստանի վերջին շարժումներն անհերքելի փորձաքար մը եղան՝ ապացուցանելու համար, թէ Սփիւռքի բոլոր գաղութներուն ու

բոլոր հոսանքները ինչպիսի միաձույլ ու վճռական զորակցութիւն կրնան յայտնաբերել՝ ի պաշտպանութիւն Մայր Հայրենիքի ժողովորդին հարազատ տրամադրութիւններուն եւ ազգային արդար իրաւունքներուն: Համահայկական այդ հոյակապ զորակցութիւնը պէտք է վառ մնայ ու շարունակուի: Աւելի քան երբեք ի գորու է այսօր համազգային հրամայական կարգախօսը՝ ՄԻԱՅՅԱԼ ԵՒ ՄԷԿ ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԻԱՅՅԱԼ ԵՒ ՄԷԿ ՀԱՅՈՒԹԻՒՆ:

Օգոստոս, 1988 թ.

«Արօշակ», ԺԹ (19) տարի, թիւ 10, 31.08.1988:

№ 95
РЕЗОЛЮЦИЯ
ОБЩЕГО СОБРАНИЯ ТРУДЯЩИХСЯ ЗАВОДА
“ОРБИТА”

օրինական և համաչափ իրագործումը կկանխեր այսօր ստեղծված
իրավիճակը: Հնարավոր է, որ ընդհանուր գործունեության ծրագիր
չունենալու պատճառներից մեկը՝ հանրապետությունում վաղուց
ստեղծված՝ ժողովրդի և նրա ղեկավարության միջև երկկողմանի
կապի թուլացումն է:

Նշված հարցում համատեղ գործունեության ընդհանուր ծրա-
գիր կլինի այն հանգույցը, որը ամուր կապ կստեղծի հայ ժողովրդի
և նրա քաղաքական ու տնտեսական ղեկավարության միջև, մեծ
խթան կհանդիսանա Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում ծա-
գած ազգային, տնտեսական, մշակութային և քաղաքական հարցե-
րի ծրագրավորված և միասնական լուծման պրոցեսում:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Սևանի ջրակենսաբանական կա-
յանի կոլեկտիվը գտնում է անհրաժեշտ.

1. Վերջնականապես լուծել Լեռնային Ղարաբաղի մարզը
Ադրբեջանական ԽՍՀ վարչական տարածքից դուրս բերելու հար-
ցը:

2. Ապահովել Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանական
ԽՍՀ-ի տարածքում ապրող հայ ազգաբնակչության անվտանգու-
թյունը:

3. Անհապաղ մասսայական լրատվական գործակալություննե-
րի ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որպեսզի նրանք խիստ
հետևողական լինեն և ճիշտ մեկնաբանեն հաղորդվող, ցուցադրվող
և տպագրվող այն բոլոր նյութերը, որոնք այս կամ այն կերպ առնչ-
վում են Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում ստեղծված իրա-

վիճակի հետ՝ օբյեկտիվորեն վերլուծելով ստեղծված իրադրության պատճառները և նրանցից բխող հետևանքները, համաժողովրդական պարսավանքի և պատասխանատվության ենթարկելով մեղավորներին ու պատմությունը և նրա բնական ընթացքը խեղաթյուրողներին:

4. Պահանջել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին կից նորաստեղծ Ազգային հարցերի հանձնախմբից՝ պարբերաբար հանդես գալ Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված դեպքերի լուսաբանմամբ:

Կայանի կոլեկտիվը համոզմունք է հայտնում, որ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում ստեղծված իրավիճակի նորմալացման պրոցեսում մեծ դեր կխաղա ժողովրդի և նրա ղեկավարության միջև երկկողմանի կապի անհապաղ վերականգնումը և ամրապնդումը:

Ժամանակն է վերջնականապես մի կողմ դնել որոշ քաղաքական և տնտեսական ղեկավարներին յուրահատուկ ամենագիտության համոզմունքը և, անպայման ընդգրկելով մտավորականության և հատկապես գիտնականների համապատասխան ներկայացուցիչներին, հեռանկարային կողմնորոշող ծրագիր մշակել և ներկայացնել այն համաժողովրդական քննարկման:

Համարում ենք անհետաձգելի անհրաժեշտություն՝ հանրապետության առջև ծառայած բոլոր հարցերը լուծել էկոլոգո-տնտեսական տեսանկյունով, այլ ոչ թե միայն տնտեսական, որի պատճառով այսօր հանրապետությունում ստեղծվել են մարդու համար ամենասարբերնապատ էկոլոգիական պայմանները:

Պետք է հիշել, որ հայկական մեր այսօրվա տարածքը մենք պարտք ենք վերցրել մեր ապագա սերունդներից ու ոչ մի բարոյական իրավունք չունենք այն չվերադարձնելու, առանց այն էլ սահմանափակ նրա բնական ռեսուրսներն աղտոտված են ու էկոլոգիապես ամենաանմխիթար վիճակում:

20.10.1988 թ.

ՀԱՍ, ֆ. 1, ց. 127, գ. 682, ք. 118–120:

№ 116

**Խ. ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԸ**

**ՀԿԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Հայտնում ենք, որ ինստիտուտի ուսանողությունը, արտահայտելով իր համերաշխությունը Արցախի հայության արդարացի և վճռական պահանջին, ինչպես նաև ի բողոք արցախյան պրոբլեմի լուծման ձգձգման, սույն թվականի սեպտեմբերի 16-ից հայտարարել էր դասադուլ՝ հետևյալ պահանջներով.

1. Արցախը անհապաղ դուրս բերել Ադր. ԽՍՀ կազմից
2. Ապահովել Ադր. ԽՍՀ-ի հայ բնակչության անվտանգությունը
3. Չորքն անհապաղ դուրս բերել Երևանի սահմաններից
4. Վերացնել «հատուկ դրությունը» Արցախում¹⁰:

Այժմ, երբ ուսանողությունը դադարեցրել է դասադուլը և կանոնավոր կերպով հաճախում է դասերին, ինստիտուտի ղեկավարությունը խնդրում է ՀԿԿ Կենտկոմին և ՀԽՍՀ Գերագույն խորհրդին, ուսանողության հետագա հուզումներին առիթ չտալու նպատակով, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ վերոհիշյալ պահանջների արագ և արդարացի լուծման համար:

Ռեկտորի պաշտոնակատար՝ **Ղազարյան Հ.Գ.**
Կուսկոմիտեի քարտուղար՝ **Կիրակոսյան Գ.Ե.**
Արհկոմի նախագահ՝ **Մահակյան Ա.Ա.**
ԼԿԵՄ Կոմիտեի քարտուղար՝ **Դավթյան Յու.Լ.**

25.10.1988 թ.

ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 664, թ. 63:

№ 117
ЗАЯВЛЕНИЕ
КОЛЛЕКТИВА ЧАРЕНЦАВАНСКОГО ЗАВОДА
"ЦЕНТРОЛИТ"

В ПРЕЗИДИУМ ВЕРХОВНОГО СОВЕТА СССР

Сейчас, когда решается вопрос, какой быть нашей Конституции и в связи с событиями в Нагорном Карабахе, трудовой коллектив Чаренцаванского литейного завода "Центролит" считает необходимым заявить следующее:

Мы не сомневаемся, что Карабахский вопрос должен решаться путем свободного выражения воли Карабахского народа. Абсолютное большинство этого народа вот уже девять месяцев настойчиво требует произвести административное переподчинение НКАО Армении. Высший представительный орган – Областной совет народных депутатов по этому вопросу принял известное решение 20 февраля 1988 г., а затем неоднократно подтвердил правильность этого решения. Мы считаем, что в НКАО целесообразно и необходимо провести референдум для принятия окончательного решения по данному вопросу.

Откладывание решения карабахского вопроса чревато серьезными и непредсказуемыми осложнениями. Мы считаем, что настал час практической проверки конституционного права одной из наций на самоопределение. Отказ в осуществлении этого права, провозглашенного во всех советских конституциях, сводит на нет ценность ныне проводимого усовершенствования Конституции СССР.

Директор завода **Тумасян Р.Ш.**

Председатель Совета трудового коллектива **Захарян М.А.**

Секретарь парткома **Калтахчян С.С.**

Председатель профкома **Костян Ф.А.**

Секретарь ЛКСМ **Авакян Ю.А.**

11 ноября 1988 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 56, л. 8.

№ 118
ЗАЯВЛЕНИЕ
КОЛЛЕКТИВА ИНСТИТУТА ФИЗИОЛОГИИ
ИМЕНИ Л.А. ОРБЕЛИ АН АРМЯНСКОЙ ССР

**ГЕНЕРАЛЬНОМУ СЕКРЕТАРЮ ЦК КПСС,
ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО
СОВЕТА СССР М.С. ГОРБАЧЕВУ**

Наш коллектив крайне озабочен и встревожен развитием событий в НКАО после известного постановления Верховного Совета СССР от 18 июля с. г. Хотя это постановление было принято для оздоровления обстановки в регионе, дальнейшие события показали, что положение ухудшается, напряженность растет. Руководство Азербайджана сделало собственные выводы из имевших место событий и под лозунгами интернационализма еще более усердно и форсированно продолжило по сути аннексионистскую политику в отношении НКАО. Так, без разрешения районных Советов начато срочное строительство промышленных, туристских комплексов в Шуше. Ходжалу и других населенных пунктах НКАО с азербайджанским населением с целью создания тысяч рабочих мест и жилья для “беженцев” – азербайджанцев. Эти действия направлены на изменение этнической картины НКАО, к созданию азербайджанского большинства в исконно армянской автономной области. Подобные конфликты могут быть предотвращены передачей выделенных на социально-экономическое развитие НКАО средств в ведение областного Совета.

Поиск же причин любых антиармянских акций со стороны азербайджанского населения почему-то всегда приводит к поиску армянских “экстремистов”. И эту позицию продолжают занимать также общесоюзные средства массовой информации и прокуратура СССР. Результатом являются массовые аресты, особый режим и провокации со стороны военнослужащих тех частей, которые призваны поддерживать общественный порядок в НКАО. Факт безнаказанности преступлений против армянского населения Азербайджана лишний раз доказывает сокрытие организаторов геноцида в Сумгаите, раздробление единого преступления на отдельные факты “хулиганства”. Эта страшная страница новейшей истории армянс-

кого народа никогда не изгладится из памяти человечества. Но следует со всей серьезностью осознать, что государство, не желающее найти и покарать истинных организаторов геноцида, само становится соучастником геноцида, создавая предпосылки для самосуда потерпевшей стороны и дальнейшей дестабилизации обстановки.

Считаем своим долгом еще раз заявить, что Карабахское движение – это общенародное движение, возникшее в русле перестройки, демократизации и гласности. Надежды армянского народа на справедливое решение вопроса Нагорного Карабаха связаны с провозглашенным партией новым курсом. А искажение и сокрытие информации выгодно лишь коррумпированным бюрократам, не желающим расставаться со своими незаслуженными привилегиями, способными существовать лишь в безгласном, неправовом, тоталитарном государстве.

Принято на общем собрании коллектива института.

14 ноября 1988 г.

НАА, ф. 1, оп. 127, д. 685, л. 119–120.

№ 119

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԻՍՈՒՄԸ

ՀԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ԶԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում և մեր հանրապետությունում ստեղծված քաղաքական խիստ լարված իրավիճակը, ԼՂԻՄ-ն Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու մասին հայ ժողովրդի համար կենսականորեն մեծ նշանակություն ունեցող և արդար պահանջը թելադրում են, որպեսզի ձեռնարկվեն առավել վճռական իրավական միջոցառումներ:

Նույնն է պահանջվում նաև Սումգայիթյան ցեղասպանության փաստի կապակցությամբ: Հարկավոր է, որ բանդիտիզմի և ազգային թշնամանք հրահրելու հանցակազմեր ևս պարունակող այդ ոճրագործություններին տալ քաղաքական և իրավական ճիշտ գնահատական, վեր հանել հայ ազգի ներկայացուցիչների մասսայական սպանությունների կազմակերպիչներին և նրանց ներգրավել քրեական պատասխանատվության շրջանակների մեջ:

Ելնելով վերոշարադրյալից՝ Հայկական ԽՍՀ արդարադատության մինիստրության սկզբնական կուսակցական կազմակերպության ղոմբաց ժողովը դիմում է ՀԿԿ Կենտկոմին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը և խնդրում է.

Առաջիկա ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում, ԼՂԻՄ-ին վերաբերվող հարցը քննարկելիս, որոշում ընդունել այն մասին, որ ներկա պայմաններում մարզի պրոբլեմի լուծման միակ ուղին քաղաքականն է և դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջիկա արտահերթ նստաշրջանին խնդրելով վճռականորեն միջամտել այդ պրոբլեմի քաղաքական լուծմանը՝ անհապաղ կարգով ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանական ԽՍՀ-ի ենթակայությունից, մինչև հարցի վերջնական և արդարացի լուծումը:

Միաժամանակ տալ Սումգայիթյան ոճրագործությունների քաղաքական գնահատականը՝ որպես հայ ազգի ներկայացուցիչների նկատմամբ կազմակերպված ցեղասպանություն, և դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջիկա արտահերթ նստաշրջանին՝ խնդրելով, որ նա նույնպես տա հիշյալ ոճրագործությունների քաղաքական գնահատականը:

Բացի այդ, ձեռնարկել միջոցառումներ, որպեսզի այդ ոճրագործությունների կազմակերպիչները և մյուս հանցագործները, որոնք առաջիմ բացահայտված չեն, նույնպես ենթարկվեն համապատասխան քրեական պատասխանատվության: Ինչպես նաև միջոցառումներ իրականացնել, որպեսզի այդ ոճրագործությունները բացահայտվեն լրիվ և ստանան ճշգրիտ իրավաբանական որակավորում, որից հետո քննվեն միմիայն ԽՍՀՄ Գերագույն դատարանի կողմից՝ որպես մեկ ամբողջական գործ:

Ժողովի նախագահ՝ **Մուսայան Ա.**
Ժողովի քարտուղար՝ **Կարապետյան Ս.**

16 նոյեմբերի, 1988 թ.

ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 56, թ. 4-5:

**ԵՐԵՎԱՆԻ ՌԵԼԵԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈԼԵԿՏԻՎԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ**

Ելնելով Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում ստեղծված իրավիճակից՝ Երևանի Ռելեի գործարանի բազմահազարանոց կոլեկտիվի ընդհանուր ժողովը սատար է կանգնում ԼՂԻՄ-ի բնակչությանը և ՀՍՍՀ Գերագույն խորհրդի 9-րդ գումարման ս.թ. նոյեմբերի 22-ին կայանալիք 11-րդ նստաշրջանից պահանջում է՝

Հարց բարձրացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության առաջ.

1. ԼՂԻՄ-ի տարածքում վերացնել պարետային ժամը՝ այնտեղ գտնվող գորամիավորումների կտրուկ կրճատումով,

2. Պարտադրել Ադրբեջանակն ԽՍՀ կառավարությանը՝ դադարեցնել ԼՂԻՄ-ի տարածքում կատարվող ապօրինի շինարարությունը,

3. ԼՂԻՄ-ի Շուշի քաղաքում բնակություն հաստատած, այսպես կոչված՝ «Հայաստանից ադրբեջանցի փախստականներին» վտարել ԼՂԻՄ-ի տարածքից, պայմաններ ստեղծել Շուշի քաղաքի հայ բնակչության վերադարձի և հայրենի քաղաքում անվտանգ կյանքի երաշխիքներ ունենալու համար,

4. ԼՂԻՄ-ի սոցիալ տնտեսական զարգացման համար հատկացված միջոցները տրամադրել մարզային տվետի տնօրինությանը,

5. ԼՂԻՄ-ի ղեկավար մարմիններին տալ տնտեսական գործունեության լրիվ ինքնուրույնություն,

6. Ճանաչել 1915 թ. Հայկական ցեղասպանությունը,

7. Դադարեցնել հալածանքները Ղարաբաղյան շարժման ակտիվիստների նկատմամբ,

8. ԼՂԻՄ-ի հայ կալանավորներին տեղափոխել Ադրբեջանական ԽՍՀ-ից դուրս:

Երևանի Ռելեի գործարանի կոլեկտիվի ընդհանուր ժողովը, առաջադրելով վերոհիշյալ պահանջները, հայտարարում է մեկօրյա նախագգուշական 100 տոկոսանոց գործադուլ՝ ս.թ. նոյեմբերի 18-ին ժամը 17-30-ից:

Ընդհանուր ժողովի նախագահ
Ընդհանուր ժողովի քարտուղար

17.11.1988 թ.

ՀԱՍ, ֆ. 207, ց. 44, գ. 56, թ. 27:

№ 121

ПРОТОКОЛ ОБЩЕГО СОБРАНИЯ КОЛЛЕКТИВА ЛЕНИНАКАНСКОГО СКТБ “СТРОЙМАШИНА” ПО “АРМКАМНЕРЕЗМАШ”

Присутствовало 108 человек от общего состава 135 человек.

Председателем собрания избран тов. Оганесян Р.С, секретарем – Керопян А.М.

ПОВЕСТКА ДНЯ

Вопрос о событиях в НКАО и вокруг него.

Выступили: т.т. Аветисян П.Ш., Григорян А.Х., Мурадян Р.В., Оганесян К.А., Акопян А.А., Будумян К.Л., Кочарян Н.Л., Кондрашин Б.Е., Оганесян С.А. и др.

Выступающие отметили, что правительство Азербайджанской ССР продолжает создавать препятствия выполнению решений ЦК КПСС и правительства СССР по реализации программы социального и экономического развития НКАО. В частности, власти Азербайджанской ССР не дают возможности для провоза стройматериалов, техники и продуктов из Армянской ССР, создают препятствия для организации тесного сотрудничества предприятий Армянской ССР и НКАО. Выделенные средства на развитие области направляются не по назначению. Преследуются лица, принимающие участие в движении за справедливое решение социально-экономических вопросов в автономной области, и лица, требующие справедливого наказания виновных в организации и проведении преступлений в г. Сумгаите.

В целях успешной реализации программы партии и правительства СССР по социально-экономическому развитию НКАО общее собрание коллектива СКТБ решило: обратиться в Президиум Верховного Совета СССР, в ЦК КП Армении, представителю ЦК КПСС и Президиума Верховного Совета СССР в НКАО и Минстройдормаш СССР со следующими предложениями:

1. Удовлетворить справедливые требования трудящихся НКАО по восстановлению ленинских принципов национальной политики;

2. С целью успешной реализации решений ЦК КПСС и правительства СССР по НКАО, создать нормальные условия для оказания помощи со стороны Армянской ССР в деле обеспечения авто-

номной области продуктами питания, строительными материалами и техникой.

3. Прекратить незаконно начатое интенсивное строительство жилья в районах НКАО (г. Шуши), целью которого является преднамеренное создание национального меньшинства армян в области.

4. Прекратить преследование лиц, участвующих в движении за справедливое решение социально-экономических вопросов в НКАО и обеспечить их безопасность.

5. Дать объективную политическую и юридическую оценки сумгаитской бойне-насилию, грабежам, поджогам, убийствам армянского населения как заранее спланированное преступление. Привлечь к строгой уголовной ответственности всех лиц – организаторов и исполнителей преступлений и вести судебное делопроизводство как единое целое.

6. Для предотвращения негативных явлений и провокаций, установить контроль за действиями войск и органов правопорядка.

7. Обеспечить оперативную и достоверную информацию через центральную прессу и телевидение о ходе событий в НКАО и вокруг него, а также судебного расследования сумгаитской трагедии.

8. Организовать телемост Москва–Степанакерт–Баку–Ереван.

Председатель собрания **Оганесян Р.С.**
Секретарь **Керопян А.М.**

18 ноября 1988 г.

ГА НКР, ф. 2, оп. 1, д. 3, л. 65–66.

№ 122
ТРЕБОВАНИЕ
КОЛЛЕКТИВА “КАДЖАРАНСТРОЙ”

**ЦЕНТРАЛЬНОМУ КОМИТЕТУ
КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ АРМЕНИИ
ЦЕНТРАЛЬНОМУ КОМИТЕТУ
КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ СОВЕТСКОГО СОЮЗА**

Открытое собрание цеховой первичной организации строительного управления НР 81 треста “Каджаранстой” Госстроя Арм. ССР, исходя из создавшейся в республике напряженной ситуации, февральских сумгаитских событий, данных московского судебного процесса и дошедших до нас отзвучков 16 ноября 1988 г. обсудив вопрос о сумгаитских событиях и московском судебном процессе, отмечает, что произошедшее февральское преступление в Сумгаите есть геноцид против армянской нации, чему содействовали партийные и советские органы города. Слушающиеся по этому поводу дела не носят политического характера и определяются только как хулиганские, а центральная пресса вообще не обращает внимания на идущие судебные процессы.

Такое холодное отношение волнует и без того взволнованный народ и в республике сохраняется напряженная ситуация. Собрание приняло решение обратиться в ЦК КПСС и требовать полную и исчерпывающую информацию о геноциде в Сумгаите, дать политическую оценку попустительству партийных и советских органов, судопроцессам по поводу сумгаитских преступлений.

Дать политическое направление согласно конвенции Генеральной ассамблеи ООН от 9.12.1948 г. за попустительство геноцида, предать суду руководящие органы партии, советов и милиции города Сумгаита, обязать соответствующие органы прессы дать исчерпывающие и беспристрастные информации о судопроцессах и вообще Карабахскому движению, организовать показ по центральному телевидению процесса суда, призвать к ответственности тех журналистов, которые напечатали лживые статьи и оскорбили достоинство армянского народа.

Цеховая первичная парторганизация строительного управления 81 треста “Каджаранстрой”.

Начальник СУ–81 треста “Каджаранстрой” **Саркисян Г.А.**
Секретарь парторганизации **Акопян Г.Г.**

18.11.1988 г.

НАА, ф. 1, оп. 127, д. 672, л. 77.

№ 123

ԵՐԵՎԱՆԻ ԶԷԿ-Ի ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ

Սույն թվականի նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ Երևանի ԶԷԿ-ի աշխատողների միտինգը:

Միտինգում նշվեց, որ Լեռնային Ղարաբաղի մասին Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների հարցի քննարկմանը նվիրված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թ. հուլիսի 18-ի որոշումն Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարության կողմից չի կատարվում: Լեռնային Ղարաբաղի տարածքում կատարվում է ապօրինի շինարարություն, որը, փաստորեն, պրովակացիոն բնույթ է կրում: Արհեստական խոչընդոտներ են հարուցվում Հայաստանից ԼՂԻՄ տարվող բեռների և շարայունների նկատմամբ:

Մարդկանց մեջ մեծ զայրույթ են առաջացնում Սոււմգայիթի ոճրագործների հետ կապված դատավարությունները, որտեղ, փաստորեն, կատարված ցեղասպանությունը հայ ազգաբնակչության նկատմամբ, չգիտես ինչու, համառորեն բնութագրվում է որպես խուլիգանություն:

Այս պայմաններում լարվածությունը Լեռնային Ղարաբաղում ավելի է սրվում գորամասերի ներկայության պարագայում:

Միտինգը որոշում է՝

Դիմել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, առաջիկա՝ 1988 թ. նոյեմբերի 22-ին նստաշրջանում քննարկելու հետևյալ հարցերը.

1. Սուսնաբերության ոլորտի զարգացման հետ կապված բոլոր դատավարությունները քննարկել որպես մեկ ընդհանուր գործ, վեր հանել և խստորեն պատժել նրա բոլոր կազմակերպիչներին ու մեղավորներին՝ դիտելով, որ այդ հանցագործությունները կատարվել են ազգային հողի վրա, և այն որակել որպես ցեղասպանություն:

2. Միութենական (կենտրոնական) թերթերում լուսաբանել սուսնաբերության հանցագործությունների դատավարությունների իրական ընթացքը:

3. Դադարեցնել բոլոր տեսակի ապօրինի շինարարությունները Լեռնային Ղարաբաղի տարածքում, որոնք կատարվում են Ադրբեջանական ԽՍՀ կառավարությանն կողմից՝ առանց մարզային խորհրդի թույլտվության:

4. Զննարկել պարետային ժամի վերացման հնարավորությունը Լեռնային Ղարաբաղում:

5. Մեկ անգամ ևս դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ՝ ԼՂԻՄ-ը անհապաղ դուրս բերելու Ադրբեջանական ԽՍՀ կազմից, մինչև հարցի վերջնական և արդարացի լուծումը:

6. Ապահովել հայ ազգաբնակչության անվտանգությունն Ադրբեջանական ԽՍՀ տարածքում, ինչպես նաև արհեստական արգելիքներ չհարուցել Հայկական ԽՍՀ-ից դեպի ԼՂԻՄ տարվող բեռների և շարասյունների նկատմամբ:

Որոշումը ընդունված է Երևանի ՋԷԿ-ի աշխատողների 18.11.1988 թ. միտինգում:

ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 56, թ. 13:

№ 124

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՄՍԻ–ՊԱՀԱԾՈՆԵՐԻ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ**

Լեռնականի մսի-պահածոների կոմբինատի կոլեկտիվը 1988 թ. նոյեմբերի 18-ին կայացած միտինգում, խիստ քննադատելով Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջը ստեղծված իրավիճակը, դիմում է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նստաշր-

ջանին քննարկման ներկայացնելու և հաստատելու կոլեկտիվի հետևյալ պահանջները.

1. Պահանջել Ադր. ԽՍՀ Գերագույն խորհրդից՝ դադարեցնելու Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում ադրբեջանցիների ապօրինությունները[...]

2. Հանել Լեռնային Ղարաբաղում սահմանված պարետաին ժամը, և մարզի տարածքում գտնվող հասարակական կարգի պահպանության նպատակով մտցված զորամիավորումներին պարտադրել՝ խստորեն պահպանել քաղաքացիների ԽՍՀՄ սահմանադրությամբ նախատեսված իրավանքները և բացառել նրանց նկատմամբ տեղի ունեցող բռնություններն ու անօրինական գործողությունները: Անհրաժեշտ համարել կարգապաշտպան զորք ուղարկել միայն տեղական իշխանությունների որոշմամբ և պահանջով:

3. Պահանջել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդից 1988 թ. փետրվարի 27-29-ին Սումգայիթում կատարված ոճրագործությունները գնահատել որպես նպատաաշին կազմակերպված ցեղասպանություն և տալ սկզբունքային քաղաքական գնահատական, կտրականապես դադարեցնել Սումգայիթյան դատավարության միակողմանի բնույթը, կատարված դեպքերը դիտել որպես նախօրոք կազմակերպված և իրականացված ամբողջություն, անվերապահորեն քննության առնել այդ գործին առնչվող բոլոր նրբությունները և ի հայտ բերել բոլոր ոճրագործներին, նրանց կազմակերպիչներին և ծնող պատճառները, որոնք հիմք են հանդիսացել կատարված դեպքերին:

Դատավարության մեղադրող կողմ ճանաչել Հայաստանի կառավարությանը:

Կոլեկտիվի հանձնարարությամբ՝ Լենինականի մսի-պահածոների կոմբինատի դիրեկտոր՝ **Գ. Մամիկոնյան**, կուսբյուրոյի քարտուղար՝ **Գ. Գավաչյան**, արհկոմի նախագահ՝ **Կ. Կարապետյան**, ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար՝ **Մ. Կարապետյան**:

18.11.1988 թ.

ՀԱՍ, ֆ. 207, ց. 44, գ. 57, թ. 14-17: Հեռագրային տեքստ:

№ 125
РЕЗОЛЮЦИЯ
КОЛЛЕКТИВА ЕРЕВАНСКОГО ЗАВОДА
“ГИДРОАППАРАТУРЫ”

В ЦК КОМПАРТИИ АРМЯНСКОЙ ССР
ПРЕЗИДИУМ ВЕРХОВНОГО СОВЕТА СССР

С февраля 1988 г. до сегодняшнего дня армянский народ с верой в демократию и перестройку в стране включился в этот процесс со своими предложениями и требованиями. Однако трагический ход событий показывает, что эти справедливые стремления в основном становятся жертвой тех или иных несправедливостей. Можно отметить трагические события в Сумгаите, одностороннее использование средств, выделенных на социально-экономическое развитие НКАО, последние события в Степанакерте и наконец судебный фарс над участниками зверств и изнасилований в Сумгаите. Сложившееся положение было обсуждено в коллективе Ереванского завода гидроаппаратуры и было принято решение объявить 18 ноября 1988 г. однодневную забастовку со следующими требованиями:

1. Дать политическую и правовую оценку злодеяний в Сумгаите, создать такую обстановку на суде, в которой бы были выявлены истинные организаторы этой запланированной акции геноцида.

2. Отменить комендантский час в Степанакерте, что даст возможность обкому и облисполкому нормализовать обстановку, запретить незаконные строительства в Ходжалу и Шуше и возглавить работу по выполнению решения постановления ЦК КПСС и Совета министров СССР от 24 марта 1988 г.

3. Учитывая, что нахождение НКАО в составе Азербайджанской ССР не способствует нормализации обстановки, вывести НКАО из состава Азербайджанской ССР до пленума ЦК КПСС по международным вопросам.

По поручению коллектива:

Директор Саркисян Г.К.
Секретарь партбюро Алексанян Н.К.

Председатель профкома **Мартirosян Р.А.**
Секретарь ЛКМС **Товмасян А.А.**
Председатель СТК **Арутюнян Ж.С.**

18.11.1988 г.

НАА, ф. 1, оп. 127, д. 654, л. 73.

№ 126
ТРЕБОВАНИЯ
КОЛЛЕКТИВА “АРМЭЛЕКТРОМАШ”

ПЕРВОМУ СЕКРЕТАРЮ ЦК КП АРМЕНИИ АРУТЮНЯНУ С.Г.
ГЕНЕРАЛЬНОМУ СЕКРЕТАРЮ ЦК КПСС,
ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА
ВЕРХОВНОГО СОВЕТА СССР ГОРБАЧЕВУ М.С.

Двенадцатитысячный коллектив производственного объединения Армэлектромаш с тревогой и болью следит за событиями в Нагорном Карабахе. Незаконное строительство со стороны Азербайджанской ССР, комендантский час, который длится свыше двух месяцев, незаконное преследование лиц армянской национальности и другие беззакония привели к тому, что трудящиеся Нагорного Карабаха с 14 ноября объявили недельную всеобщую забастовку.

Трудящиеся коллектива ПО Армэлектромаш считают справедливыми следующие требования:

1. Выполнить решение областной сессии и прекратить незаконные строительства со стороны правительства Азербайджанской ССР на территории НКАО. Отменить комендантский час, который направлен против армянской части населения НКАО.

2. Мы, считаем, что искусственное разделение судебного процесса над участниками геноцида на ряд самостоятельных производств не приведет к объективности в вынесении справедливых приговоров по отношению к преступникам. Требуем направления дела над участниками геноцида в отношении армян на дополнительное расследование, учитывая исключительную важность уголовного дела. его особую политическую значимость. Верховный суд СССР.

руководствуясь п. 1. ст. 27 закона о Верховном суде СССР, должен дела, связанные с сумгаитским геноцидом, принять к своему производству и одновременно выявить истинных вдохновителей и организаторов.

3. Немедленно выдворить лжебеженцев азербайджанской национальности из территории гор. Шуши и тем самым создать условия для возвращения армян в свои дома.

4. Прекратить все проверки и ревизии хозяйственной деятельности предприятий НКАО до окончательного и справедливого решения Карабахского вопроса.

5. Задержанных лиц армянской национальности содержать в соответствующих учреждениях Армянской ССР и армянских районах НКАО. А расследование проводить с соблюдением уголовно-процессуального кодекса и по всем жалобам армян возбудить уголовные дела, как это делается по жалобам азербайджанцев.

6. Со стороны правительства Азербайджанской ССР создаются серьезные препятствия для участия Армянской ССР в реализации постановления ЦК КПСС и Совета министров СССР по социально-экономическому развитию НКАО, поэтому обеспечить беспрепятственность проезда и разблокировать все дороги, ведущие в Нагорный Карабах. Коллектив ПО Армэлектромаш полностью поддерживает справедливые требования жителей Нагорного Карабаха.

От имени трудового коллектива,
председатель Совета трудового коллектива **Мирзоян А.М.**

21.11.1988 г.

НАА, ф. 1, оп. 127, д. 677, л. 50.

№ 127
ПОСТАНОВЛЕНИЕ
КОЛЛЕКТИВА ЕРЕВАНСКОГО ЗАВОДА
ФРЕЗЕРНЫХ СТАНКОВ

**ГЕНЕРАЛЬНОМУ СЕКРЕТАРЮ ЦК КПСС,
ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА СССР
ГОРБАЧЕВУ М.С.
ЦЕНТРАЛЬНОМУ КОМИТЕТУ КПСС
ПРЕЗИДИУМУ ВЕРХОВНОГО СОВЕТА СССР
ЦЕНТРАЛЬНОМУ КОМИТЕТУ КП АРМЕНИИ
ПРЕЗИДИУМУ ВЕРХОВНОГО СОВЕТА АРМ. ССР**

Коллектив Ереванского завода фрезерных станков на общем собрании, состоявшемся 18 ноября 1988 г. единогласно постановил:

Прошедшие 9 месяцев с 1988 года после трагических событий в Сумгаите не дали армянскому народу как в Армении, так и в Азербайджане никакой гарантии на нормальную трудовую деятельность.

Противоправные действия, происходящие в Азербайджане и Нагорно-Карабахской автономной области, постоянно приводят к забастовкам и волнениям и мешают нормальному трудовому ритму Армении.

Коллектив завода требует:

1. Решить вопрос выхода НКАО из состава Азербайджанской ССР в самое ближайшее время, как антиправные действия сталинской эпохи. Без решения этого вопроса, все остальное будет полумерой в решении национальных отношений двух соседних республик.

2. Отменить комендантский час в НКАО, который направлен только против армянской части населения НКАО.

3. Запретить любое строительство на территории НКАО без специального решения правительства НКАО.

4. Обязать правительство Азербайджана гарантировать безопасность армян и возможность перевозок материалов и оборудования для НКАО. Разблокировать все дороги, ведущие в Карабах.

5. Признать геноцид армянского народа в г. Сумгаите Аз. ССР 27–29 февраля 1988 г. и призвать к уголовной ответственности организаторов из руководящего состава, обеспечивших безнаказанные действия организаторов преступников.

6. Немедленно выдворить из г. Шуши НКАО лжебеженцев азербайджанцев для возвращения коренных жителей–армян.

7. Прекратить все проверки и ревизии хозяйственной деятельности предприятия НКАО до вывода последнего из состава Азербайджана, поскольку эти проверки являются причиной для репрессий армянской части населения.

8. Задержанных в НКАО лиц армянской национальности перевести в соответствующие учреждения РСФСР, а расследование проводить с соблюдением уголовно–процессуального кодекса и по всем жалобам армян возбудить уголовные дела, как это делается по жалобам азербайджанцев.

В связи с вышеуказанным объявляем 18 ноября однодневную забастовку. При невыполнении наших требований до начала декабря, забастовка будет продолжаться до решения вопросов.

Одновременно коллектив ЕЗФС считает себя участником армянского всенационального движения АВД.

Если Арм. ССР является суверенной республикой, то требуем возбуждения республиканской прокуратурой уголовного расследования авторов всех клеветнических статей, оскорбляющих национальное достоинство армянского народа и создающих антиармянское общественное мнение по всему СССР.

Председатель собрания **Амирян А.**
Секретарь **Хачатрян В.**

23.11.1988 г.

НАА, ф. 1, оп. 127, д. 655, л. 155–156.

№ 128

Հ.Յ.Գ. ՀԱՅ ԴԱՏԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԿՈՉԸ

Հ. Յ. Գ. Հայ Դատի յանձնախումբերը եռօրեայ խորհրդաժողով մը գումարեցին վերջերս Եւրոպայի մէջ: Խորհրդաժողովը ընդհանուր արժեւորման ենթարկեց հայ ժողովրդի ազգային–քաղաքական իրաւունքներուն վերատիրացման ի խնդիր մղուող պայքարին ներկայ հանգրուանը՝ իր արձանագրած յառաջխաղացքով թէ դիմագրաւած խնդիրներով:

Խորհրդաժողովը վերահաստատեց կարեւորութիւնը Հայ Դատի ծանօթացման եւ Հայկական Յեղասպանութեան միջազգային ճանաչման ծառայող քաղաքական, յարաբերական եւ քարոզչական աշխատանքներուն: Շեշտեց անհրաժեշտութիւնը ազգային-ազատագրական պայքար մղող եւ ճակատագրակից ժողովուրդներու հետ գործակցութեան՝ յատկապէս Թուրքիոյ հակադրուած ուժերու մէկտեղում եւ կեցուածքներու համակարգում յառաջացնելու իմաստով: Անդրադարձաւ տարբեր գաղութներու կարելիութիւնները քաղաքականօրէն արդիւնատրելու հրամայականին՝ համակարգեալ գործունէութեան ծրագիր մշակելով: Վերջապէս՝ քննեց եւ որդեգրեց յառաջիկայ հանգրուանի աշխատանքներուն յաւելեալ թափ տալու եւ կազմակերպական աւելի ազդու կառոյցով Հայ Դատի հետապնդման գործը յառաջ մղելու կոչուած առաջադրութիւններ:

Արտերկրի տարածքին ծաւալած Հայ Դատի պայքարը վերանորոգ թափով շարունակելու եւ յաւելեալ մարտունակութեամբ օժտելու ընդհանուր կոչ ուղղելով պահանջատէր հայութեան՝ խորհրդաժողովը որոշեց հանրութեան ներկայացնել իր դիրքորոշումը յարաբերաբար Արցախեան Պահանջատիրութեան, որ Փետրուար 1988 էն ասդին իր վարակիչ թափին մէջ առած է բովանդակ մեր ժողովուրդը:

Հաւաքի առաջին նիստին իսկ, Հ.Յ.Դ. Հայ Դատի յանձնախումբերուն ներկայացուցիչները կարեւորութեամբ շեշտեցին այն իրողութիւնը, որ Արցախեան պահանջատիրական շարժումով եւ անոր ստեղծած համահայկական մարտունակութեան մթնոլորտով՝ Հայ Դատի պայքարը աստիճանաբար թէ կ'ամբողջացնէ ռազմավարական իր շրջագիծը, թէ կը վերանորոգէ ուժականութեան իր ակունքները:

Խորհրդաժողովը նաեւ ընդգծեց, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի թէ Խորհրդային Հայաստանի պետական-կուսակցական ղեկավարութեան մակարդակին վրայ Արցախեան Շարժումը նուաճեց կարեւոր բարեփոխումները եւ հայութեան արդար իրատունքին դրօշակիւ կանգնող առողջ տարրերու յանձնեց Արցախեան Պահանջատիրութեան պաշտոնական դերը: Այսուհանդերձ՝ խորհրդաժողովը հաստատեց, որ պատմական դարձակէտ մը նուաճելու աստիճան յուսադրիչ Արցախեան Շարժումը այսօր թեակոխած է դժուար հանգրուան մը: Փաստօրէն, ամբողջ հայութիւնը՝ Հայրենիքի թէ Սփիւռքի տարածքին՝ անձկութեամբ կը հետեւի Արցախեան Պահանջատիրութիւնը մարտունակ իր տարերքին եւ ուժական իր թափին մէջ պահելու ճիգերը արգելակող խոչընդոտներուն:

Պահանջատեր հայութիւնը, ըստ ամենայնի, կը գտնուի հանգրուանի մը մէջ, ուր ոչ կարելի է համակերպիլ Արցախեան Հարցին արդար լուծման ի խնդիր խորհրդային ղեկավարութեան առաջադրած անբարար դարմաններուն, ոչ ալ կարելի է դժգոհութեան ու բողոքի ալիքին սաստկացումը տանիլ դէպի փակուղի. – մղել դէպի հոն, ուր ի վերջոյ ոտքի կոխան կրնան երթալ այնքան դժուարութեամբ ձեռք բերուած ժողովրդային շարժման ազատութիւնները, ազգային ղեկավարութեան առողջ եղանակի յոյսերը եւ, մանաւանդ, համահայկական միասնական ճակատով պահանջատեր ներկայանալու պատմակշիռ յաջողութիւնը:

Գժուար է հանգրուանը: Մեծ է մարտահրաւերը:

Հ.Յ.Գ. Հայ Գ-ատի յանձնախումբերու խորհրդաժողովը պատասխանատուութեան եւ պարտքի խոր գիտակցութեամբ քննեց Արցախեան Շարժման ներկայ հանգրուանը եւ անոր հետագայ մակընթացութեան ի խնդիր որոշ կոչ ուղղել պահանջատեր հայութեան բոլոր հատուածներուն, որպէսզի.

Առաջին՝ ամէն բանէ վեր, մեր ժողովուրդին միասնականութիւնը հաստատենք՝ ամրապնդելով Արցախեան Շարժումը շարունակելու մեր յանձնառութիւնը:

Երկրորդ՝ Սփիւռքը իր բոլոր ուժերով գորավիզ դարձնենք հայրենի հայութեան բողոքի ելոյթներուն՝ համաժողովրդական բնոյթ տալով անոր ցոյցերուն եւ գործադուլներուն, որոնք կը ծառայեն պայքարի միացեալ ճակատը ամրապնդելու համազգային առաջնահերթ նպատակին: Այդ պոռթկումները, սակայն, ինքնանպատակ պէտք չէ դառնան, ազատ բեմի պէտք չէ վերածուիլ անպատասխանատու տարբերու առջեւ եւ, մանաւանդ, պէտք չէ հարուածեն վարկը հայրենի այն ղեկավարութեան, որ ի վերջոյ Արցախեան Պահանջատիրութեան տէր կանգնելու ճիգը կը յայտնաբերէ: Այս վտանգը փաստօրէն, երեւան եկաւ 1988 սեպտեմբերին, երբ անհակակշիռ գործադուլներն ու դասադուլները, Հայաստանի տնտեսութեան լուրջ վնաս հասցնելու կողքին, պահ մը սպառնացին խեղաթիւրել հայութեան արդար բողոքի ձայնը:

Երրորդ՝ վստահութեան համազգային մեր գրաւոր կենդրոնացնենք խորհրդային Հայաստանի ժողովրդային առողջ զանգուածներուն, մտաւորականութեան եւ յատկապէս այն իշխանութեանց վրայ, որոնք իրենցը ըրած են Արցախեան Շարժումով յուրագործուած հայութեան հաւատոյ հաւաքական կամքը արտայայտելու կոչումը:

Պատմական դժուար քննութենէ մը կ'անցնի ողջ հայութիւնը: Հ.Յ.Դ. Հայ Դատի յանձնախումբերու խորհրդաժողովը կազմակերպական իր բոլոր ուժերը կը տրամադրէ այդ մարտահրաւէրը արժանատրապէս նուաճելու ճիգերուն եւ անխախտ հաւատքով կը յայտարարէ, թէ՛

Արցախեան Շարժման ուժականութիւնը կը պայմանաւորուի իր շղթայագերծած մարտունակութեամբ:

Ինչպէս որ Արցախեան Դատին յաղթանակը կը պայմանաւորուի պատմական դարձակէտ նուաճող պայքարի միասնութեամբ:

«Գրօշակ», ԺԹ (19) տարի, թիւ 16, 23.11.1988:

№ 129

ՀԽՍՀ ԳԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈԼԵԿՏԻՎԻ 1988 թ. ՆՈՅՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1. Ինստիտուտի կողկտիվը խստորեն դատապարտում է Երևան քաղաքում պարետային ժամ մտցնելու փաստը՝ համարելով այն լիովին անհիմն և անբարոյական: Այս պրովոկացիոն ակտն առաջին հերթին ուղղված է կուսակցության հռչակած երկրի կյանքի դեմոկրատացման և հրապարակայնության պայմաններում հայ ժողովրդի սոցիալական ու քաղաքական աննախադէպ ակտիվության դէմ: Ակտիվություն, որից նախ և առաջ վախեցավ Հայկական ԽՍՀ ղեկավարությունը՝ հնարավորություն ընձեռելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդին գործողության մեջ դնելու ներքին ծառայության հատուկ նշանակության զորքերի մասին հակաժողովրդական օրենքը: Խայտառակություն է, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 68-րդ տարեդարձը հանրապետության աշխատավորությունը դիմավորում է պարետային ժամի պայմաններում:

2. Նման վարքագիծը վերջնականապէս դիմակագերծ արեց Հայաստանի ղեկավարությանը, որը ամիսներ շարունակ չկարողացավ արժանի լինել իր կոչմանը, գլխավորել հանրապետությունում ծավալված ժողովրդական լայն զանգվածների դեմոկրատական շարժումը: Իսկ վերջին օրերի իրադարձությունները, մասնավորապէս՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքների շարունակումը պաշտոնապէս ձախողելու փորձը, առանց ՀԽՍՀ

պառլամենտի վավերացման ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ «որոշում» ներկայացնելը ակներև դարձրեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության ժողովրդից կտրված լինելու փաստը և օրվա պահանջ դարձրեց նրա լիազորությունների դադարեցումը:

3. Ինստիտուտի կոլեկտիվը, ելնելով այն իրողությունից, որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը, անսալով ժողովրդի ձայնին, այնուամենայնիվ շարունակելովեց իր աշխատանքները և ընդունեց դեմոկրատական որոշումներ, լիովին հավանություն է տալիս դրանց և այդպիսիով իր անվստահությունն է հայտնում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը: Մեր անվստահությունն ենք հայտնում ՀԽՍՀ Սինիստրների խորհրդին, որը այս տասը ամիսների ընթացքում այդպես էլ երևան չբերեց ռեալ գործնական հատկանիշներ և շարունակեց մնալ նույն երկչոտ ու անհետևողական դիրքերում: Դրա ամենավերջին դրսևորումն էր ՀԽՍՀ Սինիստրների խորհրդի նախագահի գեկուցումը, որտեղ գերիշխում էր այն միտքը, որ Հայկական ԽՍՀ և ԼՂԻՄ-ի միջև արդեն առկա են լայն տնտեսական և մշակութային կապեր: Սա նշանակում է, որ պատրաստվում էր որոշում այն մասին, որ ԽՍՀՄ ղեկավարության կողմից միանգամայն ճիշտ քաղաքական կուրս է վերցրած, երբ ԼՂԻՄ-ի հարցի լուծումը կապվում է բացառապես մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հետ:

4. Կոլեկտիվը միահամուռ ողջունում է ԼՂԻՄ-ի մարզկոմի նոյեմբերի 25-ի պլենումի որոշումը, որով կուսակցական կազմակերպությունն իրեն համարում է անջատված Ադրբեջանի կուսկազմակերպությունից: Այս քայլը՝ ի տարբերություն ՀԽՍՀ ղեկավարության, մեկ անգամ ևս վկայում է ԼՂԻՄ-ի ղեկավարության նպատակային հաստատակամության մասին՝ իրագործելու հայ ժողովրդի արցախյան հատվածի տասնամյակների իղձը:

Ժողովի նախագահ՝ **Մարգարյան Գ.Գ.**
Քարտուղար՝ **Վարդանյան Հ.Վ.**

ՀԱՍ, ֆ. 1, ց. 127, գ. 681, ք. 103–104:

№ 130

**ՇՎԵԴԻԱՅԻ ՍՏՈԿՀՈԼՄԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԲԱՅ ՆԱՄԱԿԸ**

**ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ԶԱՐՏՈՒՂԱՐ
ՄԻԽԱԻԼ ՍԵՐԳԵՅԻ ԳՈՐԲԱԶՈՎԻՆ**

Հարգարժան պարոն Գորբաչով.

Մենք՝ Շվեդիայի Հայ Առաքելական Եկեղեցու, Ստոկհոլմի Հայ Մշակութային Միության, Ուփսալայի Րաֆիու Հայ Մշակութային Միության, Սոդերթելյեի Հայ Մշակութային Միության անդամներս, Շվեդիայի տարբեր քաղաքներում բնակվող հայերս, խորապես մտահոգված ենք Լեռնային Դարաբաղի ինքնավար մարզը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության հետ միացնելու հարցերով և այդ կապակցությամբ ուզում ենք Ձեր ուշադրությանը ներկայացնել հետևյալը.

Մենք ամբողջ սրտով միացնում ենք մեր ձայները Լեռնային Դարաբաղի ինքնավար մարզի և Խորհրդային Միության այլ մասերի մեր հայ եղբայրների ու քույրերի պահանջներին և դրանք գտնում բնական, օրինական և համապատասխան բոլոր դեմոկրատական սահմանադրություններին:

Ուրախ ենք, որ Ձեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեի առաջիկա պլենումը Ձեր նախաձեռնությամբ քննարկելու է այս կարևոր հարցը:

Դարաբաղի վերամիավորումը Հայաստանի հետ հայերիս խորապես հուզող ամենակարևոր հարցերից մեկն է և այդ պատճառով՝ գտնվում է համայն աշխարհի գիտակից հայության ուշադրության կենտրոնում: Այն սպասվում է Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքի կազմման առաջին իսկ օրերից:

Մենք գտնում ենք, որ այս հարցի ճիշտ և արագ լուծումը կհանդիսանա Ձեր երկրում տեղի ունեցող դեմոկրատացումի և վերակառուցումի ի կատար ածման ամենահանգիչ ապացույցներից մեկը:

Խորին հարգանքներով՝

Պատճեններ այս նամակից ուղարկվել են նաև՝

Նորին Սուրբ Օծնություն
Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին՝
Սայր Աթոռ Սուրբ Էջմիածին,
Հայաստանի Կոմունիստական Կուսակցության
Կենտրոնական Կոմիտեի Առաջին
քարտուղար, Սովետական Միության Կոմունիստական
Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի անդամ,
Կարեն Դեմիրճյանին՝ Երևան,
Հայաստանի գրողների Միությանը՝ Երևան,
Միջուրբահայության հետ Մշակութային կապի Կոմիտեին՝
Երևան,
Շվեդիայի մամուլին և միություններին:

03.12.1988 թ.

ՀՄՄ, ֆ. 1, ց. 127, գ. 679, թ. 27-28:

№ 131
ПИСЬМО
КОЛЛЕКТИВА ГЛАВНОЙ РЕДАКЦИИ
АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ ЭНЦИКЛОПЕДИИ

ГЕНЕРАЛЬНОМУ СЕКРЕТАРЮ ЦК КПСС ГОРБАЧЕВУ М.С.
ПЕРВОМУ СЕКРЕТАРЮ ЦК КП АРМЕНИИ АРУТЮНЯНУ С.Г.
ПРЕДСЕДАТЕЛЮ ПРЕЗИДИУМА ВЕРХОВНОГО СОВЕТА
АРМ. ССР ВОСКАНЯНУ Г.М.

Коллектив Главной редакции Армянской Советской Энциклопедии в трудное для нашего народа время с чувством глубокой признательности и благодарности воспринял ту многогранную моральную и материальную помощь, которую оказали народы Советского Союза и всего мира пострадавшей от разрушительного землетрясения Армении¹¹. Эта помощь вновь показала силу подлинной дружбы и солидарности народов.

Однако, не оправившись еще от столь тяжкого стихийного бедствия, на нас обрушились новые тревоги, связанные с неоправданными и необоснованными действиями властей и средств массовой информации по отношению к перестроечному народному подъему,

воплотившемуся в Армении в форму Карабахского движения. Десятилетняя история этого движения убеждает, что оно направлено не только на достижение справедливого решения Арцахской проблемы, но и на победу идей демократии, гласности. Карабахское движение является порождением периода перестройки и гласности, оно выступает за расширение демократизма во всех сферах жизни нашего общества, в том числе и в области межнациональных отношений. В силу этого нас глубоко тревожат действия властей республики, средств массовой информации, начавших преследование участников Карабахского движения. Это тем более удивительно, что совсем недавно руководители компартии и правительства республики неоднократно выступали на многочисленных митингах, созданных активистами движения, вступали с ними в прямые контакты. Ныне же активистам движения приписываются действия, инициаторами которых являются, несомненно, остающиеся в тени элементы, подлинные противники революционной перестройки. Необоснованные репрессии в отношении активистов Карабахского движения вызывают возмущение народа, подрывают его веру в перестройку, а это на руку именно антиперестроечным силам. Нельзя сваливать на участников Карабахского движения провокационную деятельность различных групп и отдельных лиц. Мы считаем, что преследование активистов Карабахского движения несовместимо с принципами демократии. Члены Армянского комитета карабахского движения не авантюристы, рвущиеся к власти, а убежденные патриоты в высшем смысле этого слова.

Во имя высших интересов революционной перестройки мы требуем соблюдать законность, прекратить травлю активистов народного движения.

Главным оружием перестройки и демократизации должны стать правда и справедливость. Высшая власть – воля народа. В этом мы и видим смысл перестройки.

Принято единогласно на собрании коллектива Главной редакции АСЭ 26 декабря 1988 г. (протокол № 3).

Председатель собрания **Айвазян О.М.**
Секретарь собрания **Симонян С.А.**

НАА, ф. 1, оп. 127, д. 698, л. 2–3.

**Հ.Յ.Գ. ԲՅՈՒՐՈՅԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Շուրջ երկու շաբաթներ է Վեր, խորհրդային իշխանությունները բիրտ ճնշումներ ի գործ կը դնեն Հայաստանի մէջ՝ խափանելու համար հայ ժողովուրդի արդար պահանջը՝ Լեռնային Ղարաբաղը վերամիացուած տեսնելու Մայր Հայրենիքին: Արդարութեան և հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն պահանջատէր կանգնող հարիւրաւոր հայրենասէրներու ձեռքակալութիւնները յայտարարնշան են Մոսկուայի իշխանութեանց որդեգրած այս խիստ քաղաքականութեան, որուն կ'ընկերանայ՝ մամլոյ և տեղեկատուական միջոցներու օգտագործումով, խեղաթիւրումներու և ամբաստանութիւններու ճամբով, ակնյայատ ճիգ մը՝ վարկաբեկելու ոչ միայն սոսկական շարժում մը և անոր ղեկավար անդամները, այլև՝ փաստօրէն ամբողջ հայ ժողովուրդը, որ անխտիր ու անվերապահ կերպով զօրավիզ է Արցախեան պահանջատիրութեան:

7 Դեկտեմբերի աննախընթաց երկրաշարժի պատճառած աղետին մէջ, որ իր իսլած մարդկային անհամար զոհերով և պատճառած նիւթական վիթխարի աւերներով ցնցեց համայն մարդկութիւնը և որ հայ ժողովուրդի կրած դարաւոր ողբերգութեանց վրայ եկաւ աւելնալու իբրեւ կտտացող նոր վերք, առնուազն զարմանալի կը թուին կեդրոնական իշխանութեանց կողմէ՝ Հայաստանի մէջ շղթայազերծուած հալածանքները: Չարմանալի՝ նաեւ անոր համար, որ Մոսկուայի վարիչներուն մտրակն ու սպառնալիքները կ'ուղղուին, այսպէս կոչուած՝ «հայ ազգայնականներու գրգռիչ արտայայտութիւններուն և արարքներուն դէմ», որոնք, ըստ ամենայնի, արդար ընդվզումի պոռթկումներ են՝ հանդէպ Պաքուի եւ Կիրովապատի փողոցներուն մէջ «մա՛հ հայերուն» գոռացող ամբոխներուն: Հանդէպ անոնց, որոնք երէկ Սումկայթի մէջ հայերու դէմ նախճիրներ կը սարքէին, Ղարաբաղի և Ատրպեյճանի հայաբնակ շրջաններուն մէջ սպանդներ կը գործէին՝ հաւաքական կողոպուտի, հրկիզումի, ահ ու սարսափի եւ մահուան սպառնալիքի տակ աւելի քան երկու հարիւր հազար հայեր տեղահան դարձնելով իրենց տուններէն և հայրենի բնօրրանէն:

Չարմանալի ըլլալէ աւելի ընդվզեցուցիչ է այն իրողութիւնը, որ կորպաչեւեան վարչակարգի այս օրերուն, Մոսկուա տակաւին անգիտանալ կը ձեւացնէ այս բոլորը եւ սաստումի ու զսպումի ոչ մէկ գործնական միջոցառումի կը դիմէ՝ զգաստութեան հրաւիրելու համը Պաքուի պան-թուրանական ղեկավարները, որոնք կը հանդիսանան հակահայ գրգռութեանց բուն իսկ կազմակերպիչն ու պատասխանատուները:

Լեռնային Ղարաբաղի Հայաստանին վերամիացումը հայկական համընդհանուր պահանջ է եւ՝ հայրենի հայութեան, եւ՝ սփիւռքահայութեան համար. բայց ամէնէն առաջ անկապտելի իրաւունքն է ան նոյնիմքն Ղարաբաղի հայութեան, որ պարբերաբար ենթարկուած ըլլալով ջարդերու, հալածանքի եւ տեղահանութեանց՝ դարաւոր եւ դառն փորձառութեամբ գիտէ, թէ ինչ կը նշանակէ պան-թուրանական ազգայնամոլներու տիրապետութեան տակ ապրիլը: Հասկանալի է, հետեւաբար, որ ան անդուլ պիտի շարունակէ իր պահանջատիրութիւնը՝ ի խնդիր արդար լուծումի մը՝ վախճանական նպատակ ունենալով իր ազատագրումը այդ անարգ լուծէն:

Հայ ժողովուրդը պարզապէս արդարութեան պահանջ ունի խորհրդային ղեկավարութենէն, որ ազգերու միջեւ եղբայրութեան եւ միջազգայնութեան իր առաջադրութեանց սիրոյն իսկ պարտի սրբագրել անցեալի սխալները, այս պարագային՝ ստալինեան շրջանի հայ ժողովուրդին դէմ գործուած պատմական այս մեծ սխալը: Իսկ այդ սխալը սրբագրելու համար խորհրդային իշխանութիւնները պարտաւոր են նախ հասկացողութիւն ցոյց տալ հայ ժողովուրդի արդարացի ընդվզումին հանդէպ. դադրեցնեն ճնշումի եւ հալածանքի քաղաքականութիւնը՝ օրինաւոր արդար պահանջներով հանդէս եկող ժողովուրդի հայրենասէր զաւակներուն դէմ եւ, վերջապէս, որոնեն ու գտնեն յարմարագոյն ուղիները, որոնք պէտք է ի վերջոյ յանգին Լեռնային Ղարաբաղի Հայաստանին վերամիացման:

Ա՛յս է մեր համոզումը, եւ կը հուստանք, որ այլ ճամբայ չկայ ազգային հարցի ուղիղ և արդարացի լուծման համար:

Այլապէս՝ Կոմկուսի Առաջին Քարտուղար Սիխալիլ Կորպաչեւով սկսած ժողովրդավարականացման եւ վերակառուցման ժամանակաշրջանը դատապարտուած է յատկանշուելու այն բոլոր սխալներով ու ճնշամիջոցներով, որոնցմով կը մեղադրուին խորհրդային նախորդ վարչակարգերը: Խորհրդային իշխանութիւններն իրաւունք

չունին խուսափելու արդարութեան կողքին դիրքորոշուելու իրենց այս պատմական պատասխանատուութենէն, որովհետեւ պարզ հաշտարարէ աւելի՝ մեր ժողովուրդը արդարամիտ դատաւորի կեցուածք կ'ակնկալէ խորհրդային ներկայ ղեկավարութենէն:

21 դեկտեմբերի, 1988 թ.

«Դրօշակ», ԺԹ (19) տարի, թիւ 19, 04.01.1989:

№ 133

ՔԱՂՎԱԾՔ

**ԺՈՂԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ**

Լսեցին. – Լեռնային Գարաբաղի ինքնավար մարզում վերջին ժամանակները ստեղծված իրադրության մասին /զեկ.՝ Ա. Գաբրիելյան/

Որոշեցին. – Ասկերանի շրջժողկրթբաժնի կոլեկտիվի ընդհանուր ժողովը նշում է, որ ԽՍՀՄ-ի ազգամիջյան հարաբերությունների ցավոտ հարցերի լուծման ճանապարհին մեծ սպասելիքներ ունենք ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարից և ԽՄԿԿ առաջիկա պլենումից: Սակայն ԼԴԽՄ-ում հատուկ կառավարման ձև մտցնելը մեզ զրկել է մեր սահմանադրական իրավունքները ամբողջությամբ օգտագործելու հնարավորությունից:

Ասկերանի շրջժողկրթբաժնի կոլեկտիվի ընդհանուր ժողովը որոշեց.

1. Խնդրել ԼԴԽՄ-ի հատուկ կառավարման կոմիտեին՝ իր ընդլայնված նիստում քննարկել մարզի հայ բնակչության՝ Լեռնային Գարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը՝ և համապատասխան որոշմամբ դիմել ԽՍՀ ժողովրդական դեպուտատների 1989 թ. մայիսին կայանալիք համագումարին ու ԽՄԿԿ պլենումին, որտեղ անպայման ընդգծվի Լեռնային Գարաբաղը Ադր. ԽՍՀ-ի կազմի մեջ մտնելու սխալը շուտափույթ ուղղելու անհրաժեշտությունը, ռուս ժողովրդի հետ մեր շարժման համերաշխությունը և ոչ հակախորհրդային բնույթը:

2. Պահանջել ԽՍՀՄ դատախազությունից՝ ազատելու Ա.Մ.Մանուչարովին և «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին: Պատասխանատվության ենթարկել ոչ թե ԼՂԻՄ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական վատթարագույն պայմանները մատնացույց անողներին, այլ նրանց, ովքեր տարիների ընթացքում կոնկրետ գործով վնասել և այսօր էլ վնասում են երկու հարևան ժողովուրդների միջև հավասար հարաբերությունների ստեղծմանը:

3. Անհապաղ դադարեցնել Ադր. ԽՍՀ-ի նախարարությունների կամայականությունները մարզի տարածքում, և առանց շրջանային համապատասխան կազմակերպությունների համաձայնության՝ չկատարել շինարարական աշխատանքներ ու մարզի էթնիկական դեմքը խախտող գործողություններ:

4. Պահանջել Ադր. ԽՍՀ կառավարությունից՝ հատուցել Բաքվի և հանրապետության այլ քաղաքներից ստիպված հեռացած բնակիչների նյութական վնասը:

5. Պատվիրան տալ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Ա.Ի. Վոլսկուն, Բ.Վ. Դադամյանին և Ջ.Հ. Բալայանին, որ հարց բարձրացնեն Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու վերաբերյալ Կովկասյան բյուրոյի 1921թ. Հուլիսի 5-ի որոշումը փոխելու, ինչպես նաև Ադր. ԽՍՀ Շահումյանի շրջանը ԼՂԻՄ-ի կազմի մեջ ընդգրկելու մասին՝ ելնելով այն հանգամանքից, որ վերջինս պատմական Գյուլիստանը, Ադր. ԽՍՀ կառավարության որոշումով, արհեստականորեն անջատել է Արցախից:

6. ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու համար պայքարի ձևերի ու միջոցների ընտրության հարցում մեր կոլեկտիվը համերաշխություն է հայտնում մարզի բանվոր դասակարգին և մտավորականությանը:

[Գարուն, 1989 թ.]

ԼՂՀ ՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 3, թ. 28:

ՔԱՂՎԱԾՔ

ԼՂԻՄ ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԲԱԴԱՐԱ ԳՅՈՒՂԻ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ

1989 թ. ապրիլի 30-ին կայացավ ԼՂԻՄ Ասկերանի շրջանի Բադարա գյուղի հասարակության ընդհանուր ժողովը՝ ներկայությամբ 400 հոգու:

Նախագահությամբ՝ Ա. Դավթյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Առուստամյանի

Լսեցին – Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրադրության մասին

Արտահայտվեցին.

1. *Գրիշա Խոսրովի Ձեռնգիրյան*, Բադարայի միջնակարգ դպրոցի ուսուցիչ, պատերազմի և աշխատանքի վետերան, ԽՍԿԿ անդամ 1956 թ.

Մեր պահանջը՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորվելը, արդարացի է, Ղարաբաղը պատմականորեն հայկական տարածք է: Դրա անհերքելի ապացույցն է հանդիսանում մեր անտառներում պահպանված դարերի խորքից եկող հնությունները: Պետք է շուտափույթ ուղղել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ թույլ տրված կոպիտ սխալը և բավարարել մեր արդարացի պահանջը: Մենք մեծ հույսեր ենք կապում ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի և ԽՍԿԿ պլենումի «ԽՍՀՄ-ում ազգամիջյան հարաբերությունների կատարելագործման մասին» հարցի քննարկման հետ: Համոզված ենք, որ արդարությունը կհաղթի:

2. *Բենիկ Ասլանի Գասպարյան*, աշխատանքի վետերան, ԽՍԿԿ անդամ 1957 թ.-ից: Ղարաբաղյան շարժումը մեր երկրում լայն ծավալ ստացած վերակառուցման արդյունքն է: Այն պետք է հաղթական ավարտին հասնի, որովհետև դա է պահանջում վերակառուցումը: Հնարավոր չէ ապրել և աշխատել հին ձևով: Լեռնային Ղարաբաղը տարիներ շարունակ գրկված է եղել իր իրավուքներից, ինքնուրույնությունից: Մարզում ստեղծվել է սոցիալ-տնտեսական ծանր պայմաններ և վատառողջ մթնոլորտ: Ժամանակին մարդիկ ահազանգել են Աղբրեջանի կառավարությանը, սակայն հարցը ուսումնասիրելու ու աշխատավորությանը պահանջվող օգնություն ցույց տալու փոխարեն՝ սկսել են ռեպրեսիաների ենթարկել: Դրա

համար շատերը ստիպված հեռացել են Լեռնային Ղարաբաղից: Ինչու՞, օրինակ, Ա.Մ. Մանուչարովը ձերբակալված է, ինչու՞ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները գրկված են իրենց ստեղծագործական աշխատանքից: Մենք պահանջում ենք ազատել նրանց և պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր տարիների ընթացքում կոնկրետ գործերով վնասել են հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությանը:

3. *Սուրեն Բախշիի Խաչատրյան*, «Հոկտեմբեր» կոլտնտեսության բրիգադիր, ԽՍՀՄ անդամ 1984 թ.-ից: Վերջին մի քանի ամսվա ընթացքում մեր գյուղի տարածքում Ադրբեջանի կառավարության կողմից շատ անօրինություններ են կատարվել: Առանց տեղական կազմակերպությունների հետ հաշվի նստելու՝ ադրբեջանցիներն սկսել են ճանապարհ կառուցել դեպի Բաղարայի նախկին սդոցագործարանի տեղն անօրեն ստեղծված բնակակետը, որին Ադրբեջանի կառավարությունը, կոխկրտելով սահմանադրական բոլոր պահանջները, գյուղի անուն է տվել: Ինչպե՞ս կարելի է այդ բնակավայրը գյուղ անվանել, երբ բոլորովին հող չունի, զբաղմունք չունի: Ադրբեջանի տարբեր շրջաններից անօրեն այդտեղ բնակություն հաստատած մարդիկ բարբարոսաբար փչացնում են անտառը, աղտոտում ջրերը, զբաղվում գողությամբ: Նրանց հովանավորում են Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչները: Վերջին մի քանի օրվա ընթացքում Ադրբեջանի արդարադատության նախարար Օրուջըր՝ առանց տեղական մարմինների ներկայացուցչի, մեքենայով, ուղղաթիռով բազմիցս եղել է Դաշրուլաղի ադրբեջանցիների թաղամասում և Լեւոնյե կոչվող բնակակետում: Նրա ամեն մի այցը մեր հասարակության մեջ արդարացի զայրույթի ու բողոքի տեղիք է տալիս և բացասաբար անդրադառնում երկու հարևան ժողովուրդների բարեկամական կապերի վրա:

4. *Զնարիկ Կարապետի Գասպարյան*, աշխատանքի և կուսակցության վետերան, ԽՍՀՄ անդամ 1943 թ.-ից: Մենք հուզող ու հրատապ լուծում պահանջող հարցեր շատ ունենք: Սակայն ամենասառաջնահերթը Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորելու հարցն է, որի արդարացի լուծմանը պետք է մեծ օգնություն ցույց տան մեր նորընտիր ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորները: Ես խնդրում և պատվիրան են տալիս ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Ա.Ի. Վոլսկուն, Բ.Վ. Դադամյանին և Զ.Հ. Բալայանին, որպեսզի հարց բարձրացնեն Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու վերաբերյալ Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը փոխելու, ինչպես նաև Ադր.

ԽՍՀՇ ահումյանիշրջանը՝ պատմական Գյուլիստանը, ԼՂԻՄ-ի կազմի մեջ ընդգրկելու մասին: Դա մեր ամբողջ ընտրողների պատվիրանն է, և հույս ունենք, որ մեր ժողովրդական դեպուտատները ոչինչ չեն խնայի հարցին դրական լուծում տալու համար:

Նշված հարցերի շուրջը ելույթ ունեցան նաև համագյուղացիներ Վ. Արզումանյանը, Գ. Հակոբյանը, Ս. Բեգլարյանը, Ռ. Մնացականյանը և Դ. Դանիելյանը: Ժողովը նշում է, որ ԽՍՀՄ-ի ազգամիջյան հարաբերությունների ցավոտ հարցերի լուծման ճանապարհին մեծ սպասելիքներ ունենք ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարից և ԽՍԿԿ «ԽՍՀՄ-ում ազգամիջյան հարաբերությունների կատարելագործման մասին» պլենումից, սակայն ԼՂԻՄ-ում հատուկ կառավարման ձև մտցնելը մեզ զրկել է մեր սահմանադրական իրավունքները ամբողջությամբ օգտագործելու հնարավորությունից:

Ժողովը որոշում է

1. Խնդրել ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեին՝ ընդլայնված նիստում քննարկել մարզի հայ բնակչության՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը՝ և համապատասխան որոշմամբ դիմել ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների 1989 թ. մայիսին կայանալիք համագումարին ու ԽՍԿԿ ազգային հարցի մասին պլենումին, որտեղ անպայման ընդգծվի Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու սխալը շուտափույթ ուղղելու անհրաժեշտությունը, ռուս ժողովրդի հետ մեր շարժման համերաշխությունը և ոչ հակախորհրդային բնույթը:

2. Պահանջել ԽՍՀՄ դատախազությունից ազատելու Ա.Մ. Մանուչարովին և «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին: Պատասխանատվության ենթարկել ոչ թե ԼՂԻՄ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական պայմանները մատնացույց անողներին, այլ նրանց, ովքեր տարիների ընթացքում կոնկրետ գործով վնասել և այսօր էլ վնասում են երկու հարևան ժողովուրդների միջև հավասար հարաբերությունների ստեղծմանը:

3. Անհապաղ դադարեցնել Ադր. ԽՍՀ-ի մինիստրությունների կամայականությունները և մարզի դեմոգրաֆիական դեմքը խախտող այլ գործողություններ:

4. Պահանջել Ադր. ԽՍՀ կառավարությունից՝ հատուցել Բաքվից ու հանրապետության այլ քաղաքներից ստիպված հեռացած բնակիչներին հասցված նյութական վնասը:

5. Պատվիրան տալ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ Ա.Ի. Վոլսկուն, Բ.Վ. Դադամյանին և Ջ.Հ. Բալայանին, որ հարց բարձ-

րացնեն Լեռնային Ղարաբաղը Ադր. ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու վերաբերյալ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը փոխելու, ինչպես նաև Ադր. ԽՍՀ Շահումյանի շրջանը ԼՂԻՄ-ի կազմի մեջ ընդգրկելու մասին՝ ելնելով այն հանգամանքից, որ պատմական Գյուլիստանը, Ադր. ԽՍՀ կառավարության 1923 թ. որոշմամբ, արհեստականորեն անջատվել է Արցախից:

ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավերելու համար պայքարի ձևերի ու միջոցների ընտրության հարցում մեր գյուղի հասարակությունը համերաշխություն է հայտնում մարզի բանվոր դասակարգին և մտավորականությանը:

Նախագահ՝ **Դավթյան**
Քարտուղար՝ **Առուստամյան**

ԼՂՀ ՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 3, թ. 9-14:

№ 135

ԲԱՆԱԶԵՎ

**ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԿՈԼԵԿՏԻՎԻ 1989 Թ. ՄԱՅԻՄԻ 10-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ**

**ՀԿԿ ԿԿ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. ՈՍԿԱՆՅԱՆԻՆ
ՀԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
Վ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ**

Իրադարձությունների զարգացումը ցույց է տալիս, որ ԼՂԻՄ-ում հատուկ կառավարման ձև մտցնելու մասին որոշումը և՛ տեղում գործադրվելիս, փաստորեն, վեր է ածվում հերթական մի քողի, որի հետևում Արցախի հայության նկատմամբ վարվում է Բաքվի նախորդ տասնամյակների ծանոթ քաղաքականությունը: Հատուկ կառավարման կոմիտեի չափազանց թափանցիկ գործողություններն ստիպել են արցախահայությանը նորից ոտքի կանգնել և, իրենց կամքին հակառակ, դիմել պայքարի ծայրահեղ միջոցի՝ համընդհանուր գործադուլի: Չի կարելի համակերպվել այն իրողության հետ, որ հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումով, փաստորեն, մար-

գում վերացված է խորհուրդների իշխանությունը: Հատուկ դրությունը, պարետային ժամը, մարզի կուսակցական և խորհրդային մարմինները բոլոր տեսակի իրավունքներից զրկելը և հատուկ կառավարման կոմիտեն ամենալայն լիազորություններով օժտելը օղակներն են նույն շղթայի, որով փորձ է արվում կապել արցախահայության ձեռքերն ու ոտքերը և թողնել նրան այն գոհասեղանին, որի վրա հայկական Նախիջևանից մնացին միայն հայկական անունն ու առևանգված և ավերված հայկական հուշարձանները: Ազգային ճնշման և մարզը հայազրկելու քաղաքականության այսօր բարձրացած հերթական ալիքը կարող է մահացու հարված լինել ողջ հայ ժողովրդի համար, և այդ հարվածը հասցվում է՝ օգտվելով մեր գլխին ճայթած բնական ահավոր աղետի հետևանքով ստեղծված պայմաններից: Հայ ժողովուրդը և Հայկական հանրապետության կառավարությունը պետք է խստագույնս դատապարտեն Արցախի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը և պահանջեն հարցի լուծման միակ արդարացի և ճիշտ ելքը. ԼՂԻՄ-ը անհապաղ վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին:

Օգտվելով հատուկ դրության և մասնավորապես երկրաշարժից ստեղծված խառնաշփոթ իրավիճակից՝ կոպիտ փորձ է արվել խափանել Հայաստանում ծավալված համաժողովրդական, դեմոկրատական, փաստորեն, հանուն վերակառուցման ընթացող Ղարաբաղյան շարժումը: Այսօրինաբար ձերբակալված են «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, որոնք երկրաշարժի առաջին իսկ օրերից բոլոր ուժերով լծվել էին նրա հետևանքների վերացման աշխատանքների կազմակերպմանը: Առ այսօր նրանք «նախաքննության» անվան տակ առանց լուրջ մեղադրանքի, պահվում են խիստ մեկուսացված պայմաններում: Սա, փաստորեն, կոպիտ ոտնահարում է ոչ միայն մարդու, այլև նրանց թիկունքին կանգնած ողջ մի ժողովրդի իրավունքների: Անցած ամիսների ընթացքում անհիմն կերպով ձերբակալվել են շարժման նաև այլ ակտիվիստներ և մասնակիցներ: Այժմ հերյուրված մեղադրանքով ձերբակալված են Ս. Հակոբյանը և Մ. Գեորգիսյանը:

Մատենադարանի կոլեկտիվի ընդհանուր ժողովը որոշում է. դիմել հանրապետության ղեկավարությանը՝ հետևյալ պահանջներով, որոնց կատարումը միայն կարող է վկայել, որ ներկա ղեկավարությունը բարոյական իրավունք ունի կառավարելու հայ ժողովրդին.

1. Վճռականորեն միանալ ԼՂԻՄ-ի շրջկոմների քարտուղարների, շրջգործկոմների նախագահների, ԽՍՀՄ գերագույն խորհրդի ղեկուտատների 1989 թ. մայիսի 3-ի ԽՄԿԿ գլխավոր քարտուղար և

ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահ ընկ. Գորբաչովին ուղղված բաց նամակին և գործադրույի դիմած արցախահայության բոլոր պահանջներին:

2. Անհապաղ վերացնել հատուկ դրությունը և պարետային ժամը Հայաստանում:

3. Պաշտոնապես և հրապարակայնորեն միջնորդել և հասնել «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի» ձեռքակալված անդամների և շարժման մյուս ակտիվիստների ազատ արձակմանը և բացատրություն տալ կատարվածի համար:

4. Անմիջապես ազատ արձակել Ս.Հակոբյանին և Մ.Գերրոգիսյանին, դադարեցնել համաժողովրդական շարժման ակտիվիստների նկատմամբ մեղադրանքներ հերյուրելը և դրա մեղավորներին ենթարկել պատասխանատվության:

5. Հանրապետական մամուլում հրապարակել ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների՝ Մ.Ս.Գորբաչովին ուղղված մայիսի 3-ի բաց նամակը հայ ժողովրդին ու նրա ղեկավարությանը ուղղված մայիսի 4-ի կոչը:

Ժողովի նախագահ՝ Է. Բաղդասարյան
Քարտուղար՝ Ա. Մարգարյան

ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 118, ք. 13-14:

№ 136

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՍՎՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Ինչպես ցույց տվեցին վերջին ամիսների դեպքերի զարգացման ընթացքը, Արցախի կառավարման հատուկ կոմիտե ստեղծելու առթիվ կայացված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 11-ի որոշումը, փաստորեն, նպատակ էր հետապնդում հաշվեհարդար տեսնել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Կուսկոմիտեի և Մարգարյան խորհրդի հետ, որը 1988 թ. ընթացքում բազմիցս «հանդուգն» որոշումներ կայացրեց Ադրբեյջանի կազմից Մարզը դուրս բերելու և Հայաստանին միացնելու օգտին: Դրանով պետք է բացատրել, որ Հատուկ կառավարման կոմիտեի գործու-

նեությունն սկսվեց Մարզի ղեկավար մարմինների լուծարքով: «Ղա-րաբաղ» և «Կռունկ» կոմիտեների հայրենասեր անդամներին կա-մայականորեն բանտերը նետելուց հետո, այս երկրորդ հարվածը նպատակ ուներ վերջնականորեն ճզմել Արցախյան համաժողովր-դական շարժումը:

Հատուկ կառավարման կոմիտեի վերջին ամիսների գործու-նեությունից հետևում է, որ այն ստեղծված է իբրև հատուկ ռեժիմ՝ արցախահայ ազգաբնակչությանը էլ ավելի ճնշելու, ռազմական ահ ու սարսափի մեջ պահելու համար, որով անսահմանափակ ազա-տություն տրվեց Ադրբեջանի ղեկավարությանը՝ լիովին ծավալելու Մարզը ադրբեջանականացնելու նախագծված ծրագիրը: Դրա խո-սուն վկայությունն են հետևյալ փաստերը.

Ադրբեջանցի կեղծ փախստականներին Արցախում տեղավորե-լու համար, Ադրբեջանի ղեկավարության տենդագին գործողություն-ներով և Հատուկ կառավարման կոմիտեի բարեհաճ աջակցութ-յամբ, արդեն կառուցված են. Խոջալուում՝ 42 տուն, 110 մեքենայով ավտոտնտեսություն և երկու արտադրական ձեռնարկություն, Մա-լիբեյլույում՝ 40 տուն, Գուշչուլարում /Ասկերանի շրջան/ 80 տուն, Ամիրանկարում /Մարտունու շրջան/ կառուցված է ավտոտնտեսութ-յուն և կատարված են բարեկարգման աշխատանքներ. Մուղանլու-յում և Խոջավանդում գազամուղ է անցկացված, Կրկժանում /գտնվում է Ստեփանակերտի քաղխորհրդի ենթակայության տակ/ կառուցվում է Ստեփանակերտը շրջանցող ճանապարհի դեպի Շուշի և Բաքվի ռադիոգործարանի մասնաճյուղը՝ ադրբեջանցի կեղծ փախստականներին աշխատանքով ապահովելու համար: Իրակա-նում ինչ ադրբեջանցի փախստականների մասին կարող է խոսք լինել, եթե անցած մեկ տարում Հայաստան և Միության այլ վայրեր են արտաքսվել 3–4 հարյուր հազար հայեր, որոնց Ադրբեջանի տա-րածքում ունեցած 80–100 հազարավոր բնակարանները, տներն ու հողամասերը նույնիսկ գույքն ու ունեցվածքը բռնագրավվել են՝ Հա-յաստանում իրենց բնակարանները մեծ գումարով վաճառած ադր-բեջանցիների կողմից:

Հարց է ծագում. ի՞նչ եղան հենց միայն Սումգայիթից մազա-պուրծ փախած 18 հազար հայերի, Բաքվից, Կիրովաբադից, Միգե-չաուրից և Ադրբեջանի մի քանի տասնյակ քաղաքներից, շրջաննե-րից ու գյուղերից արտաքսված հայերի բնակարանները: Այդ բոլոր վայրերը հայաթափ անելուց հետո, Ադրբեջանի ղեկավարությունը հանդգնություն ունի, ադրբեջանցի կեղծ փախստականներ տեղա-վորելու անվան տակ, իրագործել Արցախն ադրբեջանականացնելու

իր զավթողական խարդախ նպատակը: Եթե իսկապես Ադրբեջանի ղեկավարությունը և Արցախի Հատուկ կառավարման կոմիտեն այդքան անհանգստացած են փախստականների ճակատագրով, ինչպես ամեն կերպ աշխատում են հավաստիացնել, ապա ինչու՞ չեն պատասխանում այն հարցին, թե ինչպե՞ս է, որ հայերից ու Հայաստանից փախած ադրբեջանցիները, փոխանակ զբաղեցնելու Ադրբեջանի տարածքից հալածական հայ փախստականների տները՝ նախընտրում են լցվել Արցախ, որտեղ ցեղասպանությունից փրկված մարդկանց համար չկան ապրելու անգամ տարրական հնարավորություններ:

Ադրբեջանի կառավարությունը, Հատուկ կառավարման կոմիտեի համաձայնությամբ, բացահայտ և գաղտնի ճանապարհներով ֆինանսավորում և վարկավորում է Մարզի ադրբեջանցի բնակչությանը: Մինչդեռ այդ նույն Հատուկ կառավարման կոմիտեն ոչինչ չի ձեռնարկում հայ փախստականների տեղավորման հետ կապված հարցերը լուծելու համար: Հատուկ կառավարման կոմիտեն արգելել է Ադրբեջանից փախած հայերի մշտական գրանցումն Արցախում՝ քողարկվելով այն կեղծ փաստարկներով, թե Արցախն անկարող է լուծել հայ փախստականների բնակարանային բարդ, իր ուժերից վեր պրոբլեմը: Ուրիշ ինչպե՞ս գնահատել Ա.Ի. Վոլսկու հրամանը՝ Արմենավանում հայ փախստականների համար նոր բնակելի շրջանի կառուցումը դադարեցնելու մասին, եթե ոչ ուղղակի գործակցություն Ադրբեջանի ղեկավարների հակահայ քաղաքականությամբ:

Ադրբեջանցիների նկատմամբ թույլ է տրվում բացահայտ և անբացատրելի հանդուրժողականություն: Վերջերս, պանթուրքիստ Անարի Արցախ կատարած այցելությունից հետո, ադրբեջանցի սանձարձակ տարրերը գողացան և մի ամբողջ գիշեր պատանդ պահեցին Արցախի զինվորական պարետին, և դրանից հետո անգամ, այդ նույն տարրերը ոչ միայն անպատիժ մնացին, այլև վայելում են Հատուկ կառավարման կոմիտեի և զինվորական իշխանության բարյացակամ հովանավորությունը: Դրան հակառակ, առ այսօր շարունակվում է անմեղ հայերի անարդարացի ու անօրեն կալանավորումը թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում: «Ղարաբաղ» կոմիտեի անդամները մոտ կես տարի է կալանված են, իսկ ադրբեջանցի մարդասպան դահիճներն ազատ շրջում են և թույն ու մահ տարածում: Ստացվում է, թե երկրի համար վտանգավոր են ոչ թե մարդասպան դահիճները, այլ մտավորականները:

Ինչպես երևում է վերը բերված տվյալներից, Ա.Ի. Վոլսկու ղեկավարած Հատուկ կառավարման կոմիտեն, Ադրբեջանի կոմկուսի

կենտրոնի հետ ձեռք ձեռքի տված, ի կատար են ածում այն նույն հրեշավոր ծրագիրը, որը մշտապես գործադրվում էր Ացախում և որը ժամանակին անպատիժ կերպով իրագործվեց Նախիջևանի ինքնավար Հանրապետությունում: Արդեն որերորդ անգամ գործի է դրվում հայ ժողովրդին իր իսկ բնօրրանում ի սպառ ոչնչացնելու և նրա հայրենիքն օտարի բաժին դարձնելու նախագիծը:

Այս պայմաններում աններելի և դատապարտելի է անտարբերության հասնող այն վերաբերմունքը, որ դրսևորում է Հայաստանի ղեկավարությունը՝ Արցախի հայ ազգաբնակչության ճակատագրի հանդեպ: Այս գործում եղած ամեն մի պասիվ վերաբերմունք համագոր է հանցավոր գործակցության:

1989 թ. մայիսի 6-ին Հայաստանի հեռուստատեսությամբ տրված «Մայրաքաղաքը Լեռնային Դարաբաղին» հաղորդումը, որը բացահայտորեն ուղղված էր ժողովրդի օրինական անհանգստությունը «փարատելու» և իրավասու մարմինների անգործությունն ու դանդաղկոտությունը կոծկելու նպատակին, մեկ անգամ ևս ցույց տվեց, որ մինչև այժմ, բացի թղթաբարությունից և անվերջ նախագծեր կազմելու անպտուղ խոսակցությունից, այլ բան չի արվել Արցախի հայությանն օգնելու հարցում: Այսպես, օրինակ, մեկ տարի է տևել Գորիս-Ստեփանակերտ ճանապարհի կառուցման միայն ֆինանսական նպատակահարմարության հաշվարկի կազմումը, որը դեռ պետք է քննարկման ներկայացվի Մոսկվային, և դրանից հետո միայն ՀՍՄՀ ճանապարհաշինության մինիստրությունն իրավունք կունենա ձեռնամուխ լինել նախագծման քաշքշուկին: Հարց է ծագում, թե ինչպե՞ս է, որ ադրբեջանցիների համար կատարվող բնակարանային, ճանապարհային, գազամուղի և այլ շինարարություններ կատարվում են կայծակնային արագությամբ, և դրանց համար ոչ մի նախագծի և քննարկման կարիք չի զգացվում:

Ինչո՞վ բացատրել, որ ադրբեջանցիների համար նույնիսկ սեփական մեքենաների ավտոտնտեսություններ են կառուցվում, երբ հայ փախստականները գուրկ են անգամ օթևանից: Ինչո՞վ բացատրել այն իրողությունը, որ այն, ինչ նախատեսված էր անել ամբողջ Արցախի համար, փութաջան ու անարգել իրագործվում է միմիայն ադրբեջանական գյուղերի համար:

Արցախցիների դիմումն՝ ուղղված հայ ժողովրդին /22 ապրիլի, 1989/ և Հայաստանի կառավարությանը, ինչպես և «Խորհրդային Դարաբաղ» թերթում Մ.Ս. Գորբաչովին ուղղված բաց նամակը /5 մայիսի, 1989/ օգնության օրհասական ճիչեր են, որոնց նկատմամբ

մեր ժողովուրդն ու կառավարությունն այլևս չեն կարող անտարբեր մնալ:

Գեկտեմբերի 7-ի աղետից հետո, երբ կործանվեց Հայաստանի մի բուռ տարածքի 1/8-ը և ոչնչացավ ժողովրդի զգալի մասը, Ադրբեջանի դեկավարության էքսպանսիան Արցախում կորստաբեր կլինի նաև ամբողջ հայ ժողովրդի համար: Ուստի, միանալով Արցախի հայությանը, պահանջում ենք որոշակի քայլեր ձեռնարկել՝ Արցախն անհապաղ և իրապես դուրս բերելու Ադրբեջանական ԽՍՀ վարչական ենթակայությունից և արդարացիորեն ու վերջնականապես վերամիավորել մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին:

Վերջին օրերս նույնիսկ Խորհրդային Միության մայրաքաղաքում՝ Մոսկվայում, հայկական եկեղեցու վրա կատարված հարձակումն ու կողոպուտը /«Մոսկովակիյ կոմսոմոլեց» 6-ը մայիսի/ և Արցախում տեղի ունեցած էթնիկական ընդհարումներն էլ ավելի հրատապ են դարձնում հարցի անմիջական լուծումը:

Հայկական ԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի աշխատակիցներ՝ տասնյակ ստորագրություններ:

11.05.1989 թ.

ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 760, թ. 30-33:

№ 137

ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱԿՏԻՎԻ ԺՈՂՈՎԻ ՊԱՀԱՆՁԸ

**ՊԱՏՃԵՆ՝ ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԳԻՆ,
ՀԽՍՀ ԿՈՄՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ**

Ս.թ. մայիսի 18-ին տեղի ունեցավ Երևանի Քիմիական ռեակտիվների գործարանի ակտիվի ժողովը, որը որոշեց՝

1. Պահանջել ՀԽՍՀ Գերագույն խորհրդից, որպեսզի ս.թ. մայիսի 25-ին տեղի ունենալիք Խորհրդային Միության ժողովրդական դեպուտատների համագումարում հարց բարձրացվի Լեռնային Դա-

րաբաղի ինքնավար մարզի պրորեկտի քաղաքական լուծման համար, այն է՝ ԼԳԽՄ-ի վերամիավորումը Մայր Հայաստանին:

2. Ազատ արձակել անօրինականորեն ձերբակալված հայ ժողովրդի լավագույն զավակներին՝ «Լարաբաղ» կոմիտեի անդամներին՝ համազգային շարժման առաջամարտիկներին: Դադարեցնել հալածանքները շարժման ակտիվիստների նկատմամբ:

3. Վերացնել անիմաստ հատուկ դրոթյունը:

4. Պահանջել ԽՍՀՄ Գերագույն խորհրդից՝ տալ քաղաքական գնահատական տուճալիթյան եղեռնագործությանը:

5. Եթե ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը վերը նշված պահանջները չներկայացնի քննարկման ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում, ապա նա պետք է ամբողջ կազմով հրաժարական տա:

6. Պահանջել ՀԽՍՀ ՆԳՄ և գլխավոր դատախազությանից՝ բացահայտել և պատժել Հայաստանի տարբեր շրջաններում տեղի ունեցած մասսայական թունավորումների մեղավորներին և դրանում ապահովել լայն հրապարակայնություն:

7. Էկոլոգիայի հարցը հանրապետությունում խոր կերպով դնել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ուշադրության կենտրոնում:

8. Աղետյալ շրջաններում արդյունավետ դարձնել վերականգնման աշխատանքները՝ լայն ընդգրկումով տեղական բնակչությանը և փախստականներին:

Որոշումն ընդունվեց միաձայն:

18.05.1989 թ.

ՀԱՍ, ֆ. 207, ց. 44, գ. 118, ք. 29:

№ 138

**ԵՐԵՎԱՆԻ Լ. ԼԻՍԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵԶՍԻԼ-
ԳԱԼԱՆՏԵՐԻԱՅԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ԿՈԼԵԿՏԻՎԻ ՎՐԴՈՎՄՈՒՆԸԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ
ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ
ՀԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ**

Երևանի Լ. Լիսինյանի անվան տեքստիլ-գալանտերիայի արտադրական միավորման կոլեկտիվն իր վրդովմունքն է հայտնում այն բանի համար, որ մինչև այժմ ավելի քան մեկ տարի տևող դարաբաղյան հարցը չի ստացել իր արդարացի, այսինքն՝ նրա Հայաստանի հետ վերամիավորման լուծումը, Ադրբեջանում կազմակերպված սումգայիթյան գազանությունը Կենտրոնական մարմինների կողմից չի ստացել իր քաղաքական գնահատականը:

Ավելի քան չորս ամիս առաջ Ղարաբաղում ստեղծված Հատուկ կառավարման կոմիտեն ոչ միայն չի նպաստել ստեղծված իրավիճակը բարելավելու գործին, այլև իր թողությունները նպաստել է Ադրբեջանի կենտրոնական ղեկավարության կողմից Ղարաբաղում ակտիվորեն տարվող հակահայկական քաղաքականության իրագործմանը: Մինչև այժմ մեր հանրապետության իրավական օրգանների կողմից սպառնիչ պատասխան չի տրվել մեր ժողովրդին այն մասին, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել բազմաթիվ աշխատավորական կոլեկտիվներում թունավորման երևույթների մեղավորներին հայտնաբերելու և նրանց պատժելու ուղղությամբ: Մեր կոլեկտիվը միանգամայն սխալ է համարում դեմոկրատիայի և հրապարակայնության ներկայիս պայմաններում Ղարաբաղ կոմիտեի անդամների ձերբակալումը և նրանց դատապարտումը:

Կոլեկտիվը պահանջում է ամենակարճ ժամկետում վերոհիշյալ պահանջները ներկայացնել ԽՍՀՄ-ին մայիսի 25-ին կայանալիք ժողովրդական դեպուտատների համագումարին:

[Միավորման աշխատավորական կոլեկտիվի կոմիտեի տասնյակ
ստորագրություններ]

19.05.1989 թ.

ՀԱՍ, ֆ. 1, ց. 127, գ. 760, թ. 41:

№ 139
ТРЕБОВАНИЯ
КОЛЛЕКТИВА ЕРЕВАНСКОГО ЗАВОДА
“ГИДРОАППАРАТУРЫ”

ВЕРХОВНОМУ СОВЕТУ АРМ. ССР
ЦК КОМПАРТИИ АРМЕНИИ
СЪЕЗДУ НАРОДНЫХ ДЕПУТАТОВ СССР

Общее собрание коллектива Ереванского завода “Гидроаппаратуры” постановило объявить забастовку 19–го и 20–го мая с г. со следующими требованиями:

1. Немедленное воссоединение НКАО с Армянской ССР,
2. Освобождение членов и активистов карабахского движения и прекращение насилия над ними,
3. Дать политическую оценку сумгаитского геноцида,

В случае неудовлетворения вышеуказанных пунктов требуем отставки ЦК КП, Президиума Верховного Совета и правительства Арм. ССР. Коллектив завода дни забастовки решил отработать в зоне бедствия на расчистке оставшихся завалов.

От имени коллектива ереванского завода “Гидроаппаратуры” директор завода **Г.К. Саркисян**, секретарь партбюро **Н.К. Алексанян**, председатель профкома **К.Б. Лазян**, председатель СТК. **Р.Г. Аветисян**, секретарь ЛКСМ **А.А. Товмасян**

19.05.1989 г.

НАА, ф.207, с. 44, д. 123, л. 65.

№ 140
ОБРАЩЕНИЕ
ПРЕЗИДИУМА АКАДЕМИИ НАУК
АРМЯНСКОЙ ССР

Президиум АН Арм. ССР глубоко озабочен теми трагическими событиями, которые в эти дни происходят в НКАО.

Единственный путь прекращения межнациональных столкновений – это политическое решение проблемы НКАО на основе ленинского принципа самоопределения наций.

В НКАО сложилась ситуация, при которой жизнь и достоинство советского гражданина находятся под серьезной угрозой. Попирается конституционное право гражданина на личную безопасность. Ситуация чревата непредсказуемыми кровавыми последствиями. Для их предотвращения Советское государство должно применить самые решительные меры. Эти средства должны быть задействованы самым решительным образом уже сегодня. Завтра будет поздно. Под угрозой находятся не только жизнь и достояние населения НКАО, но и международный политический и нравственный авторитет Советского государства. Очевидна недопустимость дальнейшего затягивания политического решения вопроса НКАО, поскольку сложившаяся взрывоопасная ситуация не что иное, как прямое следствие бесконечного откладывания решения этого вопроса. Выражаем протест против одностороннего освещения событий в НКАО центральными средствами массовой информации, очевидно имеющего целью скрыть от населения других республик, что применявшиеся до сих пор полумеры довели население области до отчаяния.

Настоящее обращение направляется руководству СССР, руководству Армянской ССР, в Президиум Академии наук СССР и Академии наук союзных республик.

Президент Академии наук Арм. ССР, академик
В.А. Амбарцумян
Академик–секретарь академии наук Арм. ССР, член корр.
Д.М. Седракян

14.07.1989 г.

НАА, ф.1, с. 127, д. 698, л. 102–103.

№ 141

**ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԽՈՐՀՐԴԻ ԲՈՂՈՔԸ**

ՎԱՇԻՆԳՏՈՆ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԵՆԱՏԻՆ

Մեծարգո պարոնայք

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ԱՄՆ–ի Մենատին 1989 թ. հուլիսի 19–ի որոշմամբ, ինքնորոշման սկզբունքի վրա հիմնված, Ղարաբաղի հայ ժողովրդի՝ Հայաստանի հետ վերամիավորվելու օրինական պահանջին սատար կանգնելու համար: Մենք բարձր ենք գնահատում Մենատի՝ նվիրվածությունը ազգերի ինքնորոշման սկզբունքին, որը մարդու իրավունքների և ազատության գաղափարների հիմնաքարն է: Ազգերի ինքնորոշման իրավունքի ոտնահարումը անխուսափելիորեն բերում է մարդու իրավունքների խախտմանը: Համոզված ենք, որ միջազգային փաստաթղթերով վավերացված այդ սկզբունքի կիրառման հարցը ոչ միայն առանձին պետության ներքին գործն է, այլև՝ ողջ միջազգային հանրության:

Ընդունված է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի Աշխատավորական կոլեկտիվի խորհրդի 1989թ. հուլիսի 28–ի նիստում:

ԱԿԻ նախագահի տեղակալ՝ **Ա.Գ. Թամանյան**
ժողովի նախագահ՝ **Էդ. Շ. Եզորյան**

02.08.1989 թ.

ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 132, թ. 53:

**ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ**

Անցել է մեկուկես տարի պատմական այն պահից, երբ Լեռնային Դարաբաղի ինքնավար մարզի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ ժողովրդական դեպուտատների նստաշրջանը, արտահայտելով Դարաբաղի հայ բնակչության միահամուռ կամքը, ազգերի ինքնորոշման իրավունքի լեհինյան սկզբունքներին համաձայն, որոշում ընդունեց Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից ԼԴԽՄ-ի դուրս գալու և Մայր Հայրենիքի՝ Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորվելու մասին: Նման ակտերը հանդիսանում են օրինական և սահմանադրական, և ընդունված են համայն քաղաքակիրթ աշխարհում: Սակայն իշխանության կենտրոնական մարմինների անպատրաստության և անվճարակառության հետևանքով՝ դարաբաղյան պրոբլեմի լուծումը արհեստականորեն ձգձգվում է, որը խիստ բացասաբար է անդրադառնում ընդհանուր իրադրության վրա՝ սպակայունացնելով դրությունը ռեգիոնում:

ԼԴԽՄ-ի նստաշրջանի որոշումը առաջ բերեց ադրբեջանական հասարակության ծայրահեղական և նացիոնալիստական խավերի կատաղությունը, հակահայկական տրամադրությունների, սպառնալիքների և վիրավորանքների սանձազերծում: Կազմակերպված շովինիստական ալիքի գազաթնակետը հանդիսացավ հայկական բնակչության ջարդերը Սումգայիթում, որոնք դատապարտվեցին ամբողջ աշխարհում՝ որպես ցեղասպանություն՝ իրենց բնույթով հիշեցնելով օսմանյան արյունաբերու սուլթանների և երիտթուրքական արկածախնդիրների դաժանությունը և ջարդերը:

Մենք հպարտությամբ նշում ենք, որ չնայած այդ բոլորին, հայ ժողովուրդը պահպանելով իր ինքնատիրապետումը և արժանապատվությունը, դիմագրավեց այդ բոլոր հարձակումներին և, մնալով հավատարիմ հումանիզմի իր դարավոր ավանդույթներին և մարդկայնության բարձր իդեալներին ու արժեքներին, Սումգայիթին չպատասխանեց Սումգայիթով: Մենք դիմեցինք ադրբեջանական

ժողովրդի առողջ բանականությանը՝ առաջարկելով ծագած կոնֆլիկտը լուծել ոչ թե արյունահեղությամբ, սպառնալիքներով և վիրավորանքներով, այլ երկխոսության կոնստրուկտիվ մոտեցման ուղիով՝ օգտագործելով պրոբլեմի լուծման սահմանադրական ձևերը: Սակայն բանականության այդ ձայնը դեռ չի գտել համապատասխան արձագանք:

Այժմ դրությունը ռեգիոնում շարունակում է մնալ վերին աստիճանի վտանգավոր: Իրադրությունը պայթյունավտանգ է, և մենք գտնվում ենք կոնֆլիկտի նոր էսկալացիայի նախօրյակին: Լարվածության նոր շրջափուլը հրահրված էր այն բանով, որ Բաքվի ծայրահեղական շրջանները վախենում են, որ կբավարարվեն ԼՂԻՄ-ի հայկական բնակչության օրինական պահանջները և իրենց ակցիաներով ուզում են ճնշում գործադրել իշխանության կենտրոնական օրգանների վրա, ստեղծել «նոր իրողություն», որը, ըստ նրանց, կհանգեցնի դարաբաղյան հարցի լուծման հետագա ձգձգմանը: Այդ շրջաններն անցել են հայերի դեմ ուղղված բացահայտ սպառնալիքների: «Հանրապետության հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ Բաքվի մտավորականության ժողովի դիմումի» մեջ /«Բակինսկի ռաբոչի», 17.08,1989/, ուղղակի ասված է, որ աղբբեջանցիների համբերության բաժակը լցվել է: Նրանում պարունակվում է կոչ աղբբեջանական ժողովրդին «մոբիլիզացնել իր ամբողջ բարոյական, քաղաքական և ֆիզիկական ուժերը» և «վերածվել անխորտակելի ուժի»:

Մենք խորը զայրույթով դատապարտում ենք այդ ցնորամիտ կոչերը: Դրանք ոչայլինչ են, եթե ոչ ազգային պատերազմի կոչ, և կարող են առաջ բերել քաոս և դառնալ անմեղ մարդկանց զոհվելու, արյունահեղության պատճառ:

Մենք մեր պարտքն ենք համարում նախազգուշացնել, որ անհնար է հայ ժողովրդին վախեցնել, որ ազգային պայքարի ոգեկոչողները կրակի հետ են խաղում, որը հղի է անկանխագուշակելի հետևանքներով Անդրկովկասի և ամբողջ Խորհրդային Միության ժողովուրդների համար: Մենք ասում ենք «Մթափվե՛ք» և հույս ենք հայտնում, որ Աղբբեջանում կան բավարար քանակությամբ սթափորեն մտածող մարդիկ, որոնք թույլ չեն տա այդ հրեշավոր մտահրազումների իրագործումը:

Նոր առճակատման, նրա հետագա էսկալացիայի և դրա ողբերգական ելքի պատասխանատվությունն ամբողջությամբ և լրիվ

կերպով կրնկնի նոր լարվածության նախաձեռնողների վրա:

Մենք կրկին հավաստում ենք, որ առաջացած կոնֆլիկտը կարելի է և պետք է լուծել խաղաղ, սահմանադրական ճանապարհով՝ ազգերի ինքնորոշման իրավունքի, քաղաքական նոր մտածելակերպի, երկխոսության և վերակառուցման քաղաքականության համապատասխան:

Այս պատասխանատու պահին, երբ ստեղծվել է բացառիկ պայթուցիկ իրադրություն, մենք հայտարարում ենք՝

1. Մենք վճռապես պաշտպանել ենք և կպաշտպանենք ԼՂԻՄ-ի բարձրագույն պետական և կուսակցական օրինական մարմինների որոշումը՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտնելու մասին: Տվյալ որոշումը համարում ենք հայ Ժողովրդի արհեստական բաժանման վերացման և Մայր Հայրենիքի հետ վերամիավորվելու ԼՂԻՄ-ի հայկական բնակչության կամքի և իղձերի ազատ դրսևորումը:

2. Ղարաբաղյան շարժումն իր բնույթով հանդիսանում է ազգային-ազատագրական, որը նպատակամղված է 1921-1923 թթ. Ղարաբաղի հայ բնակչությանը պարտադրված գաղութային լծի թոթափմանը և կազմում է գաղութային տիրապետության վերացման համար ծավալված համաշխարհային պրոցեսի անբաժանելի և օրգանական մասը: ԼՂԻՄ-ի ապագադրությամբ ժամանակի հրամայականն է:

3. ԼՂԻՄ-ի դուրս գալը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից չի նշանակում խորհրդային հանրապետությունների սահմանների վերաձևում: Դա նշանակում է միայն աղաղակող անարդարության վերացում, որը թույլ է տրվել ռեգիոնի տերիտորիաների ստալինյան-քեմալական կամայական վերաձևման հետևանքով: Վերջապես այն կրեքի Հայաստանի և Ադրբեջանի փոխադարձ հարաբերությունների բարելավմանը:

Նման քայլը լրիվ համապատասխանում է մեր դարաշրջանի ոգուն և բխում է վերակառուցման սկզբունքներից, երբ դրվում է անցյալում թույլ տրված սխալների վերացման հարցը:

4. Մենք հիացած ենք ԼՂԻՄ-ի հայկական բնակչության և նրա ղեկավարների հերոսական ոգով, կայունությամբ, քաղաքական ճկունությամբ ու հեռատեսությամբ, որոնք ստեղծված բարդ իրավիճակում հմտորեն շարունակում են պայքարը հանուն իրենց արդար գործի:

5. Մենք լիովին հավանություն ենք տալիս Լեռնային Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարի որոշմանը՝ Ազգային Խորհուրդ ստեղծելու մասին, և հանդիսավոր կերպով հայտարարում ենք, որ ճանաչում ենք ԼՂԻՄ-ի Ազգային Խորհուրդը՝ որպես մարզի ինքնակառավարման դեմոկրատական մարմին: Ղարաբաղը բնիկ հայկական հող է և նրա միակ օրինական տերը հայ ժողովուրդն է: Նա և միայն նա է իրավասու լուծելու իր տերիտորիայի ճակատագիրը: Եվ ինչքան շուտ դա ճանաչեն բոլոր կողմերը, այնքան ավելի արագ կգնա ռեգիոնում կարգավորման ընթացքը:

6. Մենք պահանջում ենք անհապաղ վերացնել ԼՂԻՄ-ի շրջափակումը և դիմում ենք խորհրդային իրավասու մարմիններին՝ կոչ անելով կիրառելու օրենքով իրենց վերապահված իրավունքները՝ կարգուկանոնի վերահաստատման և ամբողջ Ադրբեջանի տարածքում հայկական բնակչության անվտանգության ապահովման համար: Բոլոր վիճելի հարցերը պետք է լուծվեն երկխոսության միջոցով:

7. Մենք դիմում ենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ պահանջելով այլևս չհետաձգել և Գերագույն Խորհրդի առաջիկա նստաշրջանում անպայման քննարկել ԼՂԻՄ-ի հարցը՝ հաշվի առնելով ԼՂԻՄ-ի բնակչության մեծամասնության կամքի դրսևորումը և ազգերի ինքնորոշման իրավունքի լենինյան սկզբունքը:

8. Մենք կոչ ենք անում բոլոր հայերին զգոնության, միասնության, ինքնատիրապետման պահպանման. ինչպես միշտ դա եղել է մեր պատմության դժվարագույն և պատասխանատու ժամերին:

ՀԽՍՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի արեգիդենտ,
ակադեմիկոս **Վ.Հ. Համբարձումյան**
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ
Դ.Մ. Մեղրակյան

30.08.1989 թ.

ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 133, թ. 2-5:

ОБРАЩЕНИЕ ТРУДЯЩИХСЯ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОСТИ СТАВРОПОЛЬСКОГО КРАЯ

Мы, трудящиеся армянской национальности Ставропольского края, глубоко озабоченные событиями в Нагорном Карабахе, поддерживаем обращение Генерального Секретаря ЦК КПСС тов. М. С. Горбачева к армянскому и азербайджанскому народам и выражаем удовлетворение тем, что вопрос об НКАО будет рассмотрен на Пленуме ЦК КПСС.

Мы гневно осуждаем бесчинства и злодеяния воинствующих элементов в Сумгаите и других городах Азербайджана, которые в ответ на призыв партии проявить спокойствие и гражданскую зрелость совершили кровавые преступления против невинных людей исключительно из националистических побуждений. События в Сумгаите невольно напоминают о преступлениях времен геноцида армян, память о которых неутраченной болью живет в сердце каждого армянина.

[...]Историческое развитие нашей страны убедительно подтверждает, что любые отступления от ленинских принципов национальной политики неизбежно ведут к негативным явлениям, отравляют межнациональные отношения и порождают самые уродливые формы национализма. Так, на протяжении многих десятилетий руководством партийных и советских органов Азербайджана игнорировались интересы коренного армянского населения НКАО в вопросах социально-экономического развития, культуры и образования. Более того, все отчетливее проявлялось пренебрежительное отношение к национальным традициям, гражданским и религиозным чувствам армян, граничащее с откровенной неприязнью.

Именно в этом первопричины массовой миграции армян из городов и сел Азербайджана в братские республики, главным образом Армению и РСФСР. Разве пример Ставрополя не красноречиво тому подтверждение? Большинство из нас – выходцы из Карабаха, Кировабада и прилегающих районов.

Зная от родных и очевидцев о сложившейся обстановке и истинных масштабах событий в Азербайджане, мы с тревогой следим за их развитием. В этой связи, мы не находим объяснения причинам, по которым средства массовой информации не освещают во всей

полноте существо и исторические предпосылки вопроса. Мы решительно возражаем против избирательного изложения фактов, поскольку это создает почву для слухов, искажающих действительность и нагнетающих напряженность среди армянского населения края.

С 1923 года население Нагорного Карабаха, подавляющее большинство которого составляют армяне (более 75%), неоднократно обращалось с просьбой о воссоединении автономной области с Армянской ССР, особенно настойчиво – последние два десятилетия. Выражая свою солидарность с законными требованиями жителей НКАО и всего армянского народа, мы также настаиваем на исправлении ранее допущенных искажений ленинской национальной политики.

Мы, подписавшие настоящее обращение, связываем единственно справедливое решение проблемы с передачей НКАО в административное подчинение Армянской ССР. По нашему глубокому убеждению это позволит в кратчайшие сроки разрешить всю совокупность назревших в этом регионе вопросов, и, самое главное, вернуть область к полнокровной жизни в интересах всего нашего многонационального государства.

Мы верим в политическую мудрость руководителей партии и государства и с надеждой ожидаем решения о восстановлении исторической справедливости.

Без справедливости нет и не может быть истинного братства.

Да здравствует Союз Советских Социалистических Республик!

Просим огласить наше обращение, являющееся коллективным волеизъявлением жителей армянской национальности Ставропольского края, на предстоящем Пленуме ЦК КПСС.

Сентябрь, 1989 г.

НАА, ф. 207, оп. 44, д. 26, л. 59–60.

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԸ**

**ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՄԻՆԱՅԻԼ ԿՈՐՊԱՉԵՒ
ՆԱԽԱԳԱՀ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ, ՄՈՄԿՈՒԱ**

Մեծարգոյ Տիար Նախագահ, Հայկական եւ Ատրպէյճանական Խորհրդային Ընկերվարական Հանրապետութիւններուն միջեւ լարուածութիւնը հասած է այնպիսի աստիճանի մը, որ երկու երկիրներու բնակիչները իրենք զիրենք կը գտնեն աղէտաւոր պատերազմի մը եզրին: Աղէտ, որ շրջանը կրնայ վերածել նոր Լիբանանի: Բոլոր տեղեկութիւնները կը յուշեն, թէ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան ծրագրեալ կոտորածը վերահաս է: Վիթխարի պատուհասի մը ուրուականը կը թեւածէ այդ պաշարեալ երկրին վրայ: Ձեզի կը դիմենք անյապաղ միջամտելու եւ կասեցնելու այս անողոքելի յառաջխաղացումը դէպի ողբերգութեան անդունդը:

Պրն. Նախագահ, Դուք եւ Ձեր գլխատրած կառավարութիւնը Յունուար ամսուն Լեռնային Ղարաբաղի համար մասնաւոր կառավարող մարմնի մը կազմութենէն եւ այդպիսով պատմականօրէն հայկական այդ մարզը Մոսկուայի ուղղակի հակակշռին ներքեւ դրուելէ ի վեր պահած է անբացատրելի լռութիւն մը:

Այսօր Լեռնային Ղարաբաղն ամբողջովին շրջապատուած է ազերի զինեալ յորդաներով, որոնք պատրաստ են ներխուժելու այդ շրջանը եւ բազմապատիկ կրկնելու 28 Փետրուար 1988-ին Ատրպէյճանի Սումկայիթ քաղաքին մէջ անմեղ հայերու դէմ գործադրուած ջարդը: Ջարդ մը, Պրն. Նախագահ, զոր կիրարկողները տակաւին անպատիժ կը շրջագայեն այդ քաղաքին փողոցներուն մէջ՝ միշտ պատրաստ կրկնելու իրենց ոճիրը:

Հայ ժողովուրդն ու մարդկութիւնը չեն կրնար արտօնել եւ պիտի չարտօնեն նման կոտորած մը:

Հետեւեալ դէպքերը ահազանգի մատնած են հայութիւնը աշխարհով մէկ.

– Հայաստանը ներկայիս կը դիմագրաւ Ատրպէյճանի կողմէ պարտադրուած տնտեսական օղակում մը. դադրած է վառելանիւթի հոսքը եւ կանգ առած են երկաթուղիներն ու փոխադրամիջոցները: Ասիկա չէ՛ Ձեր ջատագոված միջազգայնականութիւնն ու ընկերավարական եղբայրութիւնը:

– Ամէն օր հայ մը կը սպաննուի Ատրպէյճանի եւ Լեռնային Ղարաբաղի մէջ: Ասիկա չէ՛ այն կարգի ապահովութիւնը, գոր Ձեր կառավարութիւնը պարտի հայթայթել իր քաղաքացիներուն:

– Լեռնային Ղարաբաղի 165,000 հայութիւնը՝ 80 տոկոսը մարզին բնակչութեան, տեսալէս կ’ենթարկուի ազերի յելուզակներու յարձակումներուն, կը սպաննուի, կը խոշտանգուի եւ կը չարչարուի: Ասիկա չէ՛ այն եղանակը, որով խորհրդային քաղաքացիներ պարտին յարգել մարդկային իրաւունքները:

– 1988-ի Դեկտեմբերի երկրաշարժէն վերապրողներուն նուիրուած տասնեակներով չեխտուվաքեան կանխակառուցեալ տուներ համարեա ամբողջովին կործանուած են ատրպէյճանական տարածքէն անցնող գնացքներու վրայ: Ասիկա չէ՛ այն կերպը, որով մարդիկ պարտին վարուիլ խորհրդային Միութեան մէջ:

– Լեռնային Ղարաբաղի մէջ պատկերասփռային հաղորդումները հետեւողականօրէն խանգարուած են ազերիներու կողմէ՝ ատրպէյճանական կառավարութեան աչիւփումով: Հայաստանէն այդ շրջանը գացող կառախումբեր եւ ինքնաշարժներ կանոնատարաբար ենթարկուած են յարձակումներուն ազերի զինեալ ջոկատներու, որոնք պատճառած են մահեր, վիրաւորած են բազմատասնեակ մարդիկ եւ փճացուցած են կերակրեղէն ու շինանիւթեր: Եւ այս բաները կը պատահին փոքր հողաշերտի մը մէջ, ուր մօտ 6,000 ներքին ապահովութեան ուժեր տեղադրուած են...: Ինչպէս կարելի է հանդուրժել նման կացութեան մը:

– Այդ ուժերու երեք բարձրաստիճան հրամանատարներ Շուշիի մէջ, անցեալ շաբաթ, ազերի ամբոխիսն կողմէ վար դրուած են իբրեւ պատանդ: Այդ հրամանատարները, հաւանաբար, Մոսկուայ էն տրուած հրահանգներու համաձայն, տեղի տուած են ահաբեկիչներու պահանջներուն: Դուք եւ Ձեր կառավարութիւնը, Պրն. Նախագահ, հաստատած էք վտանգաւոր ու դատապարտելի նախընթաց մը:

Պրն. Նախագահ,

Ձեր լռութիւնն ու հատուկ կարգադրութեան ամբողջական բացակայութիւնը մեծապէս նպաստած են Անդրկովկասի մէջ այս ողբերգական կացութեան ստեղծումին: Ռամկավարացումի եւ հրապարակայնութեան Ձեր ողջունելի ծրագրին սկզբունքները գործի չեն վերածուած 1923–ին Ժողէֆ Ստալինի կողմ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան դէմ գործադրուած պատմական անարդարութիւնը սրբագրելու ուղղութեամբ:

Դուք խիզախ, արդարակորով ու մարդկային իրաւունքները յարգողի կեցուածք դրսեւորեցիք Ստալինի գործած ոճիրներն ու այլ անարդարութիւնները դատապարտելու մէջ: Բայց ձխողեցաք Ձեր համապարփակ ծրագրին մէջ նկատի առնելու Լեռնային Ղարաբաղի հայոց կամքը:

Ինչո՞ւ:

Ինչո՞ւ գիտակցաբար թոյլ կուտաք գործադրութիւնը ահաւոր անարդարութեան մը: Ներկայ տագնապէն դուրս գալու միակ ուղին ԲԱՂԱՔԱԿԱՆ լուծումն է՝ Լեռնային Ղարաբաղի վերամիացումը Հայաստանին: Ասիկա վրէժխնդրութիւն չէ: Հին Արցախը Հայաստանի անբաժանելի մասնիկը եղած է 3,000 տարիներ շարունակ, եւ ճաշակած է Ստալինի նենգութեամբ 1923–ին գոյառած բաժանումի ողբերգութիւնը: Անորը քաղաքական աքթ մըն էր. այդպէս պէտք է ըլլայ նաեւ Ձերը՝ դիմադարձելու հսկայ սխալի մը:

Թո՛ղ արդարութիւնը վերահաստատուի, Պրն. Նախագահ, թո՛ղ Արցախի հնամենի եւ սրբազան հողը վերջապէս միանայ Հայաստանին, որպէսզի համայն աշխարհի մարդիկ վերստին հաւատան Ձեր անկեղծութեան, երբ շեշտէք ռամկավարացումի եւ հրապարակայնութեան սկզբունքները: Մենք տակաւին կը հաւատանք Ձեր նպատակներուն անկեղծութեան եւ զօրավիզ կը կանգնինք զանոնք իրագործելու Ձեր ճիգերուն:

Կեդրոնական Վարչութիւն
Ռամկավար Ազատական Կուսակցութեան

18.09.1989 թ.

ՀԱՍ, ֆ. 1, ց. 87, գ. 33, ք. 276–278:

№ 145

ՊԱՀԱՆՁԱԳԻՐ

**ՔԻՄԻԱԿԱՆ ՌԵԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ
ՄԱԲՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԿՈՂՄԻՑ**

ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԻ ՆՍՏԱՇՐՁԱՆԻՆ

Հաշվի առնելով, որ Լեռնային Ղարաբաղի և Հյուսիսային Արցախի հայ ազգաբնակչության կյանքին իրական վտանգ է սպառնում, քիմիական ռեակտիվների և հատուկ մաքրության նյութերի գիտահետազոտական ինստիտուտի կոլեկտիվը պահանջում է.

1. Մույն թվի նոյեմբերի 30-ին տեղի ունեցող ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանում ճանաչել ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարների որոշումները:

ա/ ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդը ճանաչել որպես մարզի միակ և օրինական իշխանություն:

2. Անօրինական համարել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ս/թ նոյեմբերի 28-ի նստաշրջանի որոշումը «ԼՂԻՄ-ի հարցի» մասին, որը կայացվել է ՀԽՍՀ և ԼՂԻՄ-ի երեսփոխանների բացակայությամբ:

3. ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը և ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդը համատեղ որոշմամբ հայտարարում են մեկ միացյալ հանրապետության ստեղծումը, որից հետո Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է պաշտպանել ԼՂԻՄ-ի և Հյուսիսային Արցախի հայ բնակչության իրավունքները՝ որպես իր քաղաքացիների:

ԱԿԽ-ի նախագահ՝ **Ա. Մանուկյան**
ԱԿԽ-ի նախագահի տեղակալ՝ **Շ. Սաղաթեյյան**

26.09.1989 թ.

ՀԱՄ, ֆ. 207, ց. 44, գ. 143, թ. 68:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԻՍՈՒՍԸ
Խ.ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ Մ.ԿՈՐՊԱՉԵԻՆ**

Խ. Հայաստանի եւ Ղարաբաղի վերջին իրադարձութիւններուն առընչութեամբ հայ ազգային երեք կուսակցութիւնները հետեւեալ դիմում-նամակը ուղղած են Խ. Միութեան ղեկավար Մ.Կորպաչեիին: Դիմումը Լիբանանի Խորհրդային Միութեան դեսպանատան միջոցաւ Կորպաչեիին յղուած է Սեպտեմբերի 23-ին:

Լեռնային Ղարաբաղի եւ Խորհրդային Հայաստանի ապրած ծանր եւ տագնապալից կացութիւնը կը հարկադրէ, որ Սփիւռքի հայութեան անունով արտայայտենք մեր խոր մտահոգութիւնը եւ ազգային ընդվզումը այն վտանգաւոր վիճակի համար, որուն մատոնում է հայ ժողովուրդը:

Իր ազգային, հողային եւ մարդկային իրաւունքներուն պաշտպանութեան համար խաղաղ միջոցներով պահանջք ներկայացուցած հայ ժողովուրդին դէմ ոճրային արարքներն ու խափանարարութիւնները, որոնք ի գործ կը դրուին ազերիներու կողմէ, ոչ միայն բռնաբարումն են մարդկային իրաւանց միջազգային օրէնքին, այլեւ՝ Խորհրդային Միութեան բազմազգ ժողովուրդներու դաւանած բարեկամութեան մարդկային սկզբունքին:

Ատրպէյճանի կողմէ հաստատուած պաշարումը՝ Խ. Հայաստանի եւ Ղարաբաղի շուրջ, կու գայ տալու նոր ապացոյցը ծրագրուած դաւի մը գոյութեան: Ժողովուրդի կենսական կարիքներու եւ ֆիզիկական ապահովութեան դէմ կիրարկուած այս անհանդուրժելի արարքները, որոնք կը գործուին ազերի մուլեգնած ամբոխներուն կողմէ, կը վայելեն քաջալերանքը իշխանութիւններուն:

Անըմբռնելի եւ դատապարտելի կը մնան Խորհրդային Միութեան կեդրոնական իշխանութիւններու կրաւորական կեցուածքն ու անտարբերութիւնը՝ մէկ կողմէ գործադրուող սանձարձակ վայրագութիւններուն եւ տնտեսական պաշարումին նկատմամբ, իսկ միւս կողմ է՝ խորհրդային կեդրոնական կառավարութեան տեղեկատուութեան աղբիւրներու ճշմարտութիւնները ծածկելու ծառայող խեղաթիւրումներուն հանդէպ:

Մեկնելով Լեռնային Ղարաբաղի եւ Խ. Հայաստանի հայութեան համար ստեղծուած վտանգաւոր իրավիճակէն՝ Սփիւռքի հայութեան անունով կը դիմենք Ձեզի, պահանջելով, որ՝

Խորհրդային Միության կեդրոնական իշխանություններն իրենց վերջնական միջամտութեամբ՝

Ա. Անմիջապես վերջ տան Հայաստանի պաշարման վիճակին:

Բ. Երաշխատրեն Լեռնային Ղարաբաղի հայութեան ապահովութիւնը՝ գործնական բոլոր միջոցառումներով:

Գ. Վճռահատեն Ղարաբաղի ճակատագիրը՝ գոհացում տալով շրջանի բնակչութեան արդար պահանջներուն:

